

**ՀՈ-ՈՄԻ ՄՐԲԱՋԱՆ ՔԱՐԱՆԱՅԱՊԵՏ
ՀՈՎՃԱՆՆԵՍ-ԴՈՂՋՈՒՄ ԵՐԿՐՈՐԴԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՄԱՅՐ ԱԹ-ՈՌ ՄՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ**

25 սեպտեմբերի 2001 թ.

Քրիստոնեությունը Հայաստանում պետքական կրոն հոչակման 1700-ամյակին նվիրված գոնակագրաբություններին մասնակցելու նպագրակով, Ռ՛ Նախագահի և Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերներով սեպտեմբերի 25-ին Հայաստան և Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հռոմի Սրբազն Քահանայապեր Հովհաննես-Պողոս Երկրորդը:

Պապմության մեջ առաջին անգամ, ի դեմք Հռոմի Պապ և Կաթիկանի նախագահ Հովհաննես-Պողոս Երկրորդի, Կաթողիկ Եկեղեցու Սրբազն Քահանայապետը այցելեց ամենահին քրիստոնյա պետություն՝ Հայաստան: Այցելեց սիրո և ողջունի համբույր փառու ի Քրիստոս իր սիրեցյալ եղբայր Նորին Սրբություն Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, համբուրելու առաջեկահասրադ մեր Եկեղեցու ու հնամենի մեր պետության հողը, հաղորդակից դառնալու մեր փառավոր պատմական անցյալին ու պարմակերտ մեր ներկային, խնդակից լինելու մեզ հետ ազգային մեծագույն գոտին՝ քրիստոնեությունը պետքական կրոն հոչակման 1700-ամյակին: Եկավ սիրո և օրինության իր խոսքը փոխանցելու մեր ժողովրդին, գլուխ խոնարհելու քրիստոնեական մեր համամարդկային արժեքների առջև, ծնրադրելու ողջ հայության սրբություն սրբոց Միաձնաէց Մայր Տաճարում, Երկրապագելու և աղոթք վերառաքելու առ Աստված Իշման Սուրբ Սեղանի առաջ՝ պարմության մեջ մի նոր և փառավոր էջ բացելով Հայ Առաքեկական և Հռոմի Կաթողիկ քույր Եկեղեցիների համագործակցության համար՝ 1700-ամյա մեր Եկեղեցուն, նրա գահակալին ու հավաբացյալներին ցնծության և ուրախության մի նոր առիթ փալով: Այցելեց ոչ այլ կերպ, քան իր իսկ խոսքերով ասած՝ որպես մի ուխտավոր:

Հոքեյանազարդ այս փարին թեև ամբողջությամբ հագեցած էր 1700-ամյակի գոնակագրաբություններով, բայց առավել հանդիսավոր էր սեպտեմբեր ամիսը, քանի որ զիսավոր հանդիսությունները նախագեստած էին հենց այս ժամանակ՝ Մյուռնորինություն, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցու օծում և այլն: Ծրագրված արարողություններն իրենց կարարումը գլուխ սեպտեմբերի 21-ից 24-ը ընկած ժամանակահավածում: Տոնախմբությունների համաժողովրդական ալիքը չինդարդարվեց, և միջազգային հանրության ուշադրությունը չնվազեց Հայաստանի և քրիստոնյա առաջին ժողովրդի նկարմամբ, այլ մի նոր ուժգնությամբ ծավալվեց Սրբազն Քահանայապերի այցելությամբ:

«Կովկասնես-Դողոս Բ Պատի ինքնաթիռը Հայաստան վայրէջ կափարեց, ինչպես և ծրագրված էր, սեպտեմբերի 25-ին, ժամը 13.00-ին, «Զվարթնոց» օդանավակայանում, որ Սրբազն Քահանայապետին դիմավորելու հին եկեղ Ամենայն Հայոց Հայրապետը, Հանրապետության Նախագահը, բարձրասդիման հոգևորականներ և պետքական պաշտոնյաններ: Ինքնաթիռից դուրս գալով Սրբազն Քահանայապետը իսականիքնեց և օրենք Հայաստան աշխարհը: Հայոց հող ուղարկություն պես Հոտի Պատին սկսութեղի վրա մաքուցվեց Հայաստանի հող, որը Կաթողիկ Եկեղեցու առաջնորդը օրենքու և համբուրեց, ըստ իր սպորության: Ապա նաև նոր խարեց հայկական հացն ու աղը՝ ի նշան բարեկամության և եղբայրության, որին հաջորդեցին զինվորական պարվու քայլերթը, ինչպես նաև հնչեցին Հայաստանի Հանրապետության և Վագիլանի օրեներգերը: Այսուհետու կառավարության, Հայաստանում հավաքարմագրված դիվանագերների, ներկա հոգևորականների և լրագրողների առջև, հագուկ պարբասպաված քեմի վրայից, Սրբազն Պատին ողջունի խոսք հղեց Հանրապետության Նախագահը.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՄ ԱՌԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻ
ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ
«ԶՎԱՐԹՆՈՑ» ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՈՒՄ**

Ձերդ Սրբություն,

Հեհափառ Տեր,

Սրբազն Հայրեն,

Հարգարժան հյուրեր,

Մեզ համար մեծ պատիվ է և ուրախություն Հայոց հողում հյուրընկալել Հովհաննես-Դողոս Երկրորդ Սրբազն Քահանայապետին: Ռոտի Պատի այցելությունն իրադարձություն է յուրաքանչյուր Երկրի կանքում, բայց այն մեզ համար ունի առանձնահատուկ արժեք ու նշանակություն: Սուրբ Վռոնի ողջ պատմության մեջ աս Հովհաննեարուիկական Եկեղեցու առաջնորդի առաջին այցն է Հայաստան:

Քրիստոնեության պատմությունը, որն ուղղակիորեն կապված է մարդկային քաղաքակրթության նվաճումների հետ, մեր ընդհանուր պատմությունն է: 17 հարյուրամյակների ընթացքում բազում փորձությունների միջով անցած մեր ընդհանուր հավաքը ու արժնքները գրավականն են մեր հայությունների ամերության և գերմության: Ահա ինչու մենք լիսիուս ենք, որ այս այցը պատմական է լինելու նաև Հայաստանի Հանրապետության և Վագիլանի գործակցության զարգացման ու խորացման առումով:

Ձերդ Սրբություն,

Դուք կանգնած եք եղել ակունքներում այս մեծ գործոնքացների, որ տեղի ունեցան Արևելյան Եվրոպայում և նախկին Խորհրդային Միության Հանրապետություններում նշանավորելով մարդու և ժողովուրդների ա-

զարության նոր դարաշրջան: Ձեր գործունեության համամարդկային ընդգրկումը, աշխարհում խաղաղության ու կայունության պահպանմանն ուղղված Ձեր ջանքերը ոգևորիչ են նաև մեզ հաճառ:

Տայասպանի և Վարդիկանի միջև արդեն ձևավորվել են գործակցության ամուր հիմքեր: Դիշում եւ արձագանքը Վարդիկանում բացված «Տայասպան-Դուռ» ցուցահանդեսի, որի կազմակերպման ու հաջողության մեջ մեծ ավանդ ունեցաք Դուք, Ձերդ Սրբություն:

Մենք մեծ խորհուրդ ենք տեսնում այն փաստի մեջ, որ այս այցը տեղի է ունենում Տայասպանում քրիստոնեությունը պետրական կրոն հողակելու 1700-ամյակի դրույակարությունների ընթացքում, երբ մեր ողջ ժողովուրդը վերակոչում է իր երախտավոր նախնիների հավաքն ու կապարած մեծ գործերը: Գործեր, որոնք, հոգնոր վերածնունդ բնուելով հայ ժողովրդին, միաժամանակ հարստացրին համաքրիստոնեական մշակույթի գանձարանը:

Քրիստոնեության մարդասիրական վեհ գաղափարները, նրանց հոգուր ու բարոյական հզոր լիցքերը կենսունակ են բոլոր ժամանակներում: Արդի աշխարհում, երբ մարդկությունը վկան է դառնում արելության հրեշտակոր դրաւորումների, առավել քան թանկ են մեզ համար բարու, գեղեցիկի, եղբայրական սիրո համամարդկային արժեքները:

Տասը լրարի առաջ վերածնվեց մեր անկախ պետրականությունը, և այս օրերին նշում ենք մեզ համար այդ մեծ հորելյանը: Նոր դարաշրջանում մենք պետրականորներ վերահիմասպավորում ենք մեր պատմա-մշակութային ողջ ժառանգությունը և արժեքային համակարգը, որոնք խորապես թափանցված են քրիստոնեությամբ: Ավանդական արժեքների արդիական ընկալումը մեզ բերել է նոյն հիմքերի վրա բարձրացած ելքուպական արժեքների որդեգրում: Չափանիշներ, որ պաշտպանն են Ասրծո մեծագույն պարզություն՝ մարդու և ազգի ազարության:

Տայասպանի աշխարհագրական դիրքի շնորհիվ մենք միշտ գտնվել ենք կրոնների և քաղաքակրթությունների շվիման գծում: Այս իրողությունը և Տայոց Սիրութի առկայությունը մեր առջև բացել են աշխարհաճանաչման նոր հորիզոններ, թեև ադրեն լայնախոհ հայացք: Մենք հարստացրել ենք մեզ համերաշխության, հանդուրժողականության և համաձայնության բարի պարունակով:

Ձերդ Սրբություն,

Մենք ողջունում ենք Վարդիկանի և Տայ Առաքելական Եկեղեցու հարաբերությունների սերտացումը, որ հիմնված է քոյլ Եկեղեցիների փոխարքութացող կապերի բազմադարյան ավանդույթների վրա: Մեզ հուսավառում է նաև այդ հարաբերություններում իշխող էկումենիկ ոգին:

Բիրլիական Արարագի հովանու ներքո կրկին ողջունում են Զեզ, Զերդ Սրբություն: Դուք Զեր ներկայությամբ առանձնահարուկ շուր եք հաղորդում Հայոց Մեծ Դարձի հորելյանական պոնակագարություններին:

Բարի գալուստ:

Այսուհետև Սրբազն Քահանայապետին ուղղված բարիգալսպրյան ջերմ խոսք ասաց Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսը.

**Ն.Ս.Օ. Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՏԻ
ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ
«ԶԱՐԹՆՈՅՑ» ՕԴԱՌԱՎԱԿԱՅՄՆՈՒՄ**

Զերդ Սրբություն:

Գոհություն ենք հայունում Աստծուն, որ այսօր, հնագոյն, բայց հավատով միշտ նորոգ Հայոց եղլորում, սուրբգրական Արարագի դիմաց, որախությունն ունենք ընդունելու Սուրբ Պետրոսի Առողի Գահակալիդ:

Մեր Եկեղեցիների պարտության մեջ առաջին անգամ է, որ Հոգևոր Առաքության համապետը ուղարկում է դնում աստվածաշնչան հինավոր այս հոդին:

Զեր այցելությունը Հայաստանի Հանրապետություն հնարավոր եղանակ քանի որ այլևս անցրած են խորհրդային աստվածներժության անհույս ժամանակները: Հայոց պետությունն այսօր անկախ է, և Հայոց Եկեղեցին՝ ազատ:

Մեր ժողովուրդը Զեզ սիրով սպասում էր դեռ տարիներ առաջ, երբ Զերդ Սրբության այցելությունը նախարարեաված էր երջանկահիշարժակ Մեր նախորդի՝ Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի հրավերով: Պատմական և օրինակ այս պահին Մեր աղոթքն ու խոնարհումն ենք բերում հոգելուս Վազգեն Ա և Գարեգին Ա Վեհափառ Հայրապետերին, ովքեր նախանձախնդիր գրնվեցին Հայ և Կաթողիկ մեր երկու Եկեղեցիների հարաբերությունների սերդացման ու ամրապնդման գործում:

Զերդ Սրբություն, Զեր այցը Նոյ նահապետի երկիր նախախնամարար իրականացավ ազգի համար նշանակալի այս տարրում, երբ համայն հայությունը Հայաստանում, Արցախում և Ափյուղում խնդությամբ պոնախմբում է քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հոգակելու 1700 և Հայաստանի ու Արցախի անկախ պետականության 10-ամյա հորելյանները: Դրաշալի այս դրույթի հանդիսությունների օրերին Զեր ներկայությունը Հայաստանում, մեր ժողովուրդի կողմին, առանձնակի ուրախություն է մեզ համար: Գոհունակ հոգով ցանկանում ենք արձանագրել, որ Դուք ինչպես Սպիրակի երկրաշարժի աղեղալի օրերին նեցուկ եղաք մեզ փորձության ժամկետ, նոյնպես և այսօր մեզ հետ մասնակից եք մեր ուրախությանը:

ԲԱՐԵ ԳԱԼՈՒՅ



Այսօր Հոռմեական Կաթողիկ Եկեղեցու Սրբազնան Քահանայապետիդ ողոքունելու են եկել մեր ծողովորդի բազմաթիվ բարեպաշտ զավակներ՝ գլխավորությամբ Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանում և սփյուռքում գործող հոգևոր իրենց առաջնորդների: Այսինք են նաև Հայաստանում հավատարմագրված դիվանագիրական ներկայացուցիչներ՝ բոլոր խանդակառ այն գիտակցությամբ, որ քրիստոնեական Եկեղեցիները, իրքի անդամներ Քրիստոսի մեկ մարմնի, միասին են իրենց առաջնորդյան մեջ: Այս միաբարիչ ու հուսապարզ իրողությունն ապրեցինք տակալին մի քանի օր առաջ, երբ Սրբալոյս Սյուոռնի օրինության և Երևանի Մայր Եկեղեցու օծման արարողությունները աղիթ ունենալով, քրիստոնյա Հայաստանի սիրո ու միաբանության հրավերը մեր հողում համախմբեց քրիստոնեական քոյր Եկեղեցիների պատվիրակներին:

Աղոթենք միասնաբար սիրեցյալ եղբայր ի Քրիստոս, որ Ձեր այցելությունը առավել սերտացնի մեր Եկեղեցիների հարաբերությունները և սիրո շաղախով արդյունավորի մեր համագործակցությունը: Եվ թող Ասրված հաճությամբ ուղղունի և օրինի Հայ և Կաթողիկ Եկեղեցիների եղբայրությունը՝ իշահ Քրիստոսի Եկեղեցու զորության, ի փառ Աստծո Ամեն:

Բարի եկաք և միաբական Հայաստան երկիր:

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ

«ՀԱՎԱՐԺՆՈՅ» ՕԴԱՆԱՎԱԿԱՅՄՈՒՄ

Պարոն Նախագահ,

Վեհապետ Տիր.

Հայաստանի սիրելի բարեկամներ.

Ընորհակալություն են հայրենում ամենաեղանակ Աստծուն, որ այսօր, առաջին անգամ լինելով, Հոռմի Եպիսկոպոսը գրնվում է հայ հողի վրա՝ այս հնամյա և սիրելի երկրում, որի մասին պատճեն էր երգուն Ձեր մեծ բանասրեղ Դանիել Վարուժանը.

«Գիշակներէն հորիզոնները մինչեւ^{*}
Կը պարածուի մեր մայրութիւնը հողի»*:

Երկար ժամանակից ի վեր սպասեցի շնորհի և ցնծության այս պահին և հաղողապես՝ սկսած Վարիկան կարուրած Ձեր այցելությունից, Պարոն Նա-

* Մեջքերումը կապարված է «Աղոթենք եղբայրը» բանասրությունից [Խմբ.]:

իազար և Ձերդ Սրբություն Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց:

Խորապես երախտապարտ եմ Ձեզ, Պարոն Նախազար, բարիգալսպյան Ձեր ազնիվ խոսքերի համար, որ ինձ ուղղեցիք Տայապահնի կառավարության և քաղաքացիների անունից: Ընորհակալություն եմ հայրենուն նաև քաղաքացիական և զինվորական իշխանություններին, ինչպես նաև Տայապահուն հավագրաբնագրված դիվանագիրական մարմիններին, որոնք ինձ այսօր բարի ժամանում մատյեցին: Խոսք Ձեզ ուղղելով, Պրն Նախազար, գնահատական և բարեկամություն հայրենուն ոչ միայն ձեր հայրենակիցներին, որոնք ապրուն են մայր երկրում, այլ նաև աշխարհացրիլ միլիոնավոր հայերին, որոնք հավագրաբն են մնում իրենց ժառանգության ու ինքնությանը և այսօր իրենց հայրենիքն նայում են վերանորոգ պարծանքով և գոհունակությամբ: Նրանք նոյնական իրենց սրբնորությունը կրուն են Դանիել Վարուժանի կողմից արտահայրված միևնույն ապրումները:

«Նեշտ է մտքին ընկղմի կապոյփին մէջ լուսալիք,
Նասարեկիլ - թէ հարկ է - կորակներուն մէջ վերին,
Գրնել ասրդեր նորանոր, կորսուած իին հայրենիք՝
Ուրկէ ինկած հոգին դեռ կու լայ կարօրն եթերին»*:

Ձերդ Սրբություն Գարենիկ Կաթողիկոս Եղբայրական սիրով ի Տեր ողջագորուն եմ Ձեզ և Եկեղեցին, որը նախազահուն եք: Առանց Ձեր քաջակեռնքի՝ են այժմ այսպես չէի լին, որպես ովկապավոր հոգնոր ուղևորության մէջ, որ զայիս է մեծարելու Տայապահնյայց Առաքելական Եկեղեցու քրիստոնեական կյանքի բացառիկ վկայությունն այսօան երկար դարերի ընթացքուն և հարկապես քանակորդ դարում, որը ձեռ համար եղավ սարսափի և բարապանքի աննկարագրելի ժամանակաշրջան:

Տամայն Կաթողիկ Եկեղեցին կիսում է Ձեր և բոլոր հայերի անհուն ուրախությունը՝ այս մեծապես սիրեցյալ երկրում քրիստոնեությունը որպես պետական կրոն հոչակնելու 1700-ամյակի առիթով:

Ողջագորուն եմ Տայապահն և մերձական տարածաշրջանի Կաթողիկ Եկեղեցու եպիսկոպոս Եղբայրներին և բոլոր հավագայալներին՝ ուրախություն ունենալով հասկապելու ձեռ Տեր Շնուն Քրիստոսի սիրո, ինչպես նաև մերձակորդի և ձեր երկրի ծառայության մէջ:

Խորապես հոգվում եմ՝ մղածելով այս երկրում քրիստոնեական փառակոր պարմության մասին, որը, ավանդության համաձայն, իր սկզբնադրյուրը գրնում է Թաղենու և Բարդուղիմենու առաջալների քարոզության մէջ: Տնօքազայում, Սուրբ Գրիգոր Լուսավորչի վկայության և գործունեու-

* Մնջքերում՝ «Կապերու զիշեր» բանասրուղությունից [Խոմք]:

թյան շնորհիվ, առաջին անգամ լինելով. քրիստոնեությունը դարձավ մի ամբողջ ազգի հավատը: Տիեզերական Եկեղեցու պարեկրություններն ընդմիշտ հասպատճենու են, թե ինչպես Հայաստանի քնակիչները եղան առաջինները, որպես ժողովուրդ, որոնք ընդունեցին մեր Տեր Դիտու Քրիստոսի Ավելարանի շնորհը և ճշմարդությունը: Այդ հերոսական ժամանակներից ակասձ՝ ձեր Եկեղեցին երբեք չի դադարել Հայոց Աստծո գովքը մերրոդել, իր Որդու՝ Դիտու Քրիստոսի մահվան և հարության խորհուրդը գրուախրներել և միմիթարիչ Սուրբ Դոգու օգնությունը հայցել: Դուք նախանձախնդրություն պահում եք ձեր բազմաթիվ մարդիրուների հիշապակը, և իրոք՝ մարդիրությունը եղել է Հայ Եկեղեցու և ժողովուրդի քնորոշ հարկանիշը:

Հայաստանի անցյան անքաժանելի է իր քրիստոնեական հավատից: Դիտու Քրիստոսի Ավելարանի հանդեպ հավատարմությունը հավասարապես նպաստելու է ապագային, որն ազգը կերպում է անցյալ դարի ավելածություններից հետո: Պարո՞ն Նախազահ, սիրելի բարեկամներ, դուք բակավին նոր գրուախրնեցիք ձեր անկախության լրանայնակը: Խոսքը վերաբերում է դեպի մի արդար և ներդաշնակ հասարակության ուղղված ճանապարհին կարարված մի նշանակալի քայլի, որում բոլորը կարող են լիովին զգալ իրենց ինչպես սեփական լրանը և կարող են հարզված լրեսնել իրենց արդար իրավունքները: Բոլորը և հարկապես նրանք, ովքեր հանդապեկության պարասիանակուներն են, հասարակաց բարիքի համար այսօր կանչված են արդարության և համերաշխության մեջ իրական հանձնառության՝ նախադասելով ժողովրդի առաջինմությունը մասնակի որևէ այլ շահից: Եվ աս ճշմարիտ է նաև լրաբաժնաշրջանի մակարդակով խաղաղության հրապարակ որոնումի հարցում: Խաղաղությունը կարող է կերպվել միմիայն փոխադարձ հարզանքի, լրաբեր հասարակությունների միջև հարաբերություններում գործադրված արդարության և հզորների կողմից ցուցաբերված վեհանձնության հասպատուն հիմքի վրա:

Հայաստանը դարձավ Եվրոպայի խորհրդի անդամ, և աս ցոյց է լրախն ձեր վճռականությունը՝ հասպարականորեն աշխատելու և քաջությամբ իրագործելու պետության հասպատությունների ժողովրդավար բարեկարգությունները, որոնք անհրաժեշտ են քաղաքացիների մարդկային և քաղաքացիական իրավունքների հանդեպ հարգանքը երաշխավորելու համար: Մրանք դժվար ժամանակներ են, բայց նաև ժամանակներ, որ մարդարակներ են կարդում ազգին և նրան ներշնչում քաջություն: Յուրաքանչյուր ոք պետք է հասպարականորեն որոշ սիրել իր երկիրը և զոհաբերել իր անձը նրա իրական բարզավաճանանը, ինչպես նաև նրա ժողովրդի հգնուոր ու նյութական բարորությանը:

Ասդիմած թող ազակությամբ, բարեկեցությամբ և խաղաղությամբ օրինի հայ ժողովրդին:

Ողջույնի խոսքերի փոխանակությունից հետո Հռոմի Պապը, Վեհափառ Հայրապետի, իր շքախմբի և հյուրերի ուղևորությամբ, ուղևորվեց Մայր Աթոռ, որ նրան էին սպասում Մայր Աթոռի հոգևորականաց դասը, ինչպես նաև բազմահազար հավաքացյալ ժողովուրդ, որոնք եկել էին ականաքենսն ու վկան լինելու պատմական ու պարմակերպ այդ օրվան, ներկա գրինվերտ մեր երկու Եկեղեցիների միջն զարգացող մի առողջ երկխոսության, որը բարեկամության նոր, ավելի անմիջական ու ջերմ շերտ պիտի հաղորդի քրիստոնյա երկու հենագոյն Եկեղեցիներին: Երկու Հռվապերը մեքենաներից իշխան Մայր Աթոռի անմիջապես դարձածում ու «Հրաշափառ» և «Ուրախ լեռ» շարականների երգեցողության ներքո մուտք գործեցին Մայր Տաճար, որ գեղի ունեցավ «Հրաշափառ»-ի արարողությունը: Արարողությունը սկսվեց համապարապիսան պարշաճ սաղմոսների ընթերցումով, որից հետո Սրբազն Քահանայապերը կարդաց «Ճ մեջ բամարիս...» աղոթքը, որին անմիջապես հեղինեց «Ճ Սիածինն ի Նորէ» շարականը: Այսուհետեւ ներկա հավաքացյալ ժողովուրդին իրենց օրինության խոսքն ուղղեցին երկու եկեղեցապետերը:

Ն.Ս.Օ. Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿԱԾԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՄԱՍՆԱԿՏ ՄԱՅՈՒՄՆԱԾԻ

Զերդ Սրբություն

Գոհություն և փառք ենք մարդուցում Բարձրյալին, որ բացվող նոր հազարամյակուն երկրորդ անգամ Մենք Ձեզ հետ միասնաբար աղոթք ենք առարտում առ Աստված հանուն աշխարհում խաղաղության, ժողովուրդների միջ սիրո ու բարեկամության արգասավորման: Այսօր Տերը մեզ ունկնդիր է 1700-ամյա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Էջման Սուրբ Անդանի առջև, որ Ասրծոն հետ մեր ժողովուրդի համահավաք հանդիպման խորին խորհուրդ Սրբություն Սորոցն է:

301 թ. այսպես՝ Արարատի դիմաց հայոց մեծ խոսպովանողի՝ Սուրբ Գրիգոր Աստվածապետ Տայրապետի հայոցքի առջև իշակ Քրիստոս: Տավարգով բժշկություն զբած Տրդադ թագավորի գլուխորությամբ, ազնվազարմ տիկնանց, նախարարների ու զորականների հետ մեր ժողովուրդը այսպես Տաճար կառուցեց Արարատի լանջից բերված քարերով՝ կամարելով Միածնի Էջքի վայրը, որտեղից Ավելարանի Լուսոյ տարածվեց ու առարգացավ ողջ Տայրապանում՝ նորոգելով Սուրբ Թաղենու և Սուրբ Բարդուղիմենու առաջրաների ձեռովով վատված կանթեղները հավաքի: Տարուրյան հավաքով իմաստավորվեց հայ ժողովուրդի կյանքի ընթացքը: Դարձու մեջ ազարության ու արդարության սերը, խաղաղության ձգումն ու առարումը եղան հայոց պետության ու հայ ժողովուրդի նկարագիրը, զոյության ու հավերժության խորհուրդը: Արդարն, առաջելություն է Սուրբ Էջմիածնը, ինչպես բնորոշել են մեր Տայրապետերը խավարից դեպի լոյս, մահվանց դեպի կյանք առաջնորդող առաքելություն, ամեն հայի հոգում

Ասդո՞ք Հջըր պատկերագրող և այս արժեքով համայն հայոց միավորող առաքելություն:

Գրի դարից ի վեր այսրեղ է հասկացվել Ամենայն Դայոց Կաթողիկոսության նստավայրը: Այսրեղից են Դայոց Դայրապետուրը և եր ժողովությին առաջնորդել դեպի Ավարայր ու Սարդարապատ՝ վասն հավատի ու հայրենաց մարտը մղելու: Այսրեղից է երջանկահիշապակ Վազգեն Առաջին Վեհափառ Դայրապետն օրինել 88-ի և եր ազարանարտը Արցախյան և 91-ի անկախ Հանրապետությունը Դայոց:

2001 թվականին, եր մեր ժողովուրդը վերստին անկախ հայաստանում, Արցախյան և Սփյուռքում տրոնահիմքում է իր համազգային մկրտության և Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հոչակնան 1700-ամյակը, իր սրբությամբ ու նվիրականությամբ, պատմական ու ազգային նշանակությամբ Սուրբ Հջմիածինն է համայն հայոց հոգուն և համայն հայոց հոգին է Սուրբ Հջմիածնում, քանզի Սուրբ Հջմիածնուն է եղել յորաքանչյուր հայորդի որդեգիր Ասդո՞ք:

Մեզ համար մեծ ուրախություն և միմիթարություն է, որ Ձերդ Սրբությունը լուսավուն Սեր հրավերը: Այսօր, եր Դայ Եկեղեցին հուսառակ օրեն է ապրում Հայաստանի նոր անկախության դրոշի ներքո, Դուք հայոց հոգեւոր Կենտրոնում՝ Սուրբ Թադեոսի և Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աթոռում, ի Քրիստոս սիրով եղբայրար մասնակից եք մեր հորեւանական տոնին և աղոթքակից մեզ:

Եկեք միասնաբար հայցենք Բարձրյալից, որ Աստվածային օրինությամբ զորացնի աշխարհում Դոյսն ու Հավատը և առաջնորդի բոլոր ժողովուրդներին դեպի խաղաղության ու բարորության ապահով հանգրվաններ: Թող անխախտ լինի ու բարի արգասիքներ տա եղբայրական սերդ հավատակից քրիստոնյա Եկեղեցիների՝ ի փառ Ասդո՞ք Ամենակալին և հորախություն համայն հայապացենց:

«Ճնորհը, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ և ընդ ամեննեսեան ամէն»:

ՇՈՎՐԱՆՆԵՍ-ԹՈՂՈՂՈՍ Բ ՄՐԲԱՋԱՆ ԴԱՄԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՄԱՅԱՐՈՒՄ

Մեծարգոն եղբայրներ,

Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Դայոց,

Ծայր սիրելի եղբայրներ և քոյրեր ի Քրիստոս.

Թող բոլորի վրա իշնի Ասդո՞ք օրինությունը:

Ուխտավորի իւ քայլերն առաջնորդեցին ինձ Հայաստան՝ զովերգելու Ասդո՞ք Ավելարակի լուսի համար, որ տասնյոթ դար առաջ սիրվեց այս երկրում, այս վայրից, ուր Ս. Գրիգոր Լուսավորիչն սրացակ Ասդո՞ք Որդու

երկնային տեսչոքը՝ լուսի կերպարանքով։ Սուրբ Էջմիածինը խոյանում է որպես խորհրդանիշը Նայականի հավատի՝ Վարդ Միածին Որդու հանդեպ։ Որը երկնքից իշավ և մեռավ՝ փրկելու համար մեզ մեղքերից, և Որի հարությունը հանդիսավոր կերպով բացում է նոր երկինքը և նոր երկիրը։ Բոլոր հայերի համար Էջմիածինը մնում է այս միևնույն հավատի հարավության գրավականը՝ ի հետու երեկով և աստօնվա կրած դրասավանքների և աղյուսահեղությունների, որոնք ձեր բազմաչարչար պարմությունը պահանջեց որպես ձեր հավատարմության գիր։ Այս վայրում փափազում եմ վկայել, որ ձեր հավատը մեր հավատը է Դատու Քրիստոսի հանդեպ, ճշմարիկ Վարդած և ճշմարիկ մարդ՝ «Մեկ Տեր, մեկ հավատ, մեկ մկրտություն» (Եփ. 2:5)։

Վյուգեն՝ Ս. Էջմիածնում, ուրախությամբ լի հոգով փոխադառում եմ խաղաղության համբուրը, որ Զերդ Սրբությունն ինձ վովեց անցյալ նոյնամբերին Պետրոս առաքյալի դաւթարանի մոտ՝ Շունում։ Մեծ հոգմունքով ողջունում եմ Զեզ և Նայ Առաքելական սիրեցյալ Եկեղեցու արքեպիսկոպոսներին, եպիսկոպոսներին, վանականներին, քահանաներին և հավատացյալներին։ Որպես Շունի Եպիսկոպոս՝ հիացումով ծնրադրում եմ ձեր ժողովորդի մկրտության երկնային պարզեցի առջև և հարգանք եմ մաղուցով այս դրամարին՝ ազգի խորհրդանշանին, որը սկզբից նեթ, Ս. Գրիգորի տեսչութիւն համաձայն, իր հիմնասյունների վրա կրում է մարդիրության նշանը։

Ծնորհակալություն, Զերդ Սրբություն, Զեր դրանն ինձ բարի գալուստ մաղթելու համար։ Սա առաջին անգամ է, որ Շունի Պապը որում մեկ երկրում իր կեցության ամբողջ ոնթացքում բնակվում է իր մի եղբոր դրանը, որը նախագահում է Արևելքի փառականծ մի Եկեղեցում, և նրա հետ կիսում է ամենօրյա կյանքը միևնույն հարկի դրակ։ Ծնորհակալություն սիրու այս նշանի համար, որ ինձ մեծապես հոգում է և բոլոր կաթոլիկների սրբերին խոսում խորին բարեկամության և եղբայրական սիրու մասին։

Սիրու այս պահին սլանում է դեպի Զեր երջանկահիշապակ նախորդները։ Խոսք վերաբերում է Վազգեն Ա Կաթողիկոսին, որը շատ աշխարհեց, որպեսզի իր ժողովուրդը կարողանա գենանել ազարության խոստացված երկիրը, և վերադարձավ Վարդ մոտ ճիշդ այն ժամանակ, երբ անկախությունը հասավ։ Խորհում եմ Գարեգին Ա աննոռանալի Կաթողիկոսի մասին, որն ինձ համար եղբոր նման եղավ։ Նրան այցելելու իմ ծրագիրը, երբ, գնալով վարդարանում էր նրա առողջությունը, հնարավոր չեղավ իրագործել, թեև դրա հոյսն ունեի իմ ամբողջ սրբութ։ Այդ փափազը գոհացում է սրբանում այսօր այսպես Զերդ Սրբության հետ, հավատարանքն սիրելի և թանկացին եղբայր։ Անհամբեր սպասում եմ հաջորդ օրերին, երբ Զեզ հետ ձեռք ձեռքի հանդիսելու եմ հայ ժողովուրդին, և միասնաբար շնորհակալու-

թյուն ենք հայրնելու ամենակալ Ասպիծուն՝ ի Քրիստոս հավատարմության դասների համար:

Կտաս Քրիստոս՝ Տեր և Փրկից լուն մեզ լուրոնել հրաշալի ճշմարդությունը, որ Ս. Գրիգորը լսեց այս վայրում այն է, որ Ձո՞ւ սիրո դռներն ամբողջապես բաց են Ձո՞ւ արարածների դիմաց, ... որ լույսը, որ լցնում է երկիրը, Ձո՞ւ Ավելարանի քարոզությունն է:

Տեր, արժան արա մեզ այս օրերի շնորհին: Ընդունիր մեր միասնական աղոթքը, ընդունիր համայն Եկեղեցու երախտագիրությունը հայ ժողովրդի հավատքի համար: Ներշնչիր մեզ խոսքեր և արարքներ, որոնք արդարացնեն եղբոր սերը եղբոր հանդեպ: Սա Քեզնից խնդրում ենք բարեխոսությամբ Ս. Աստվածանոր՝ Դայատարանի Թագուհու, և Ս. Գրիգորի, որի խոսքն այսպես հայրնելոց լույսի կերպարանքով: ամեն:

Այսուհետք երկու եկեղեցավեպերը «Պահպանիչ» աղոթքով օրինեցին ներկա ողջ հավատացյալ քազմությանը և ուղեցին իրենց քայլերը դեպի Մայր Տաճարի շրջափակ, ուր հանգզում են երշանկահիշապակ մեր նախորդ Հայրապետերի աճյունները՝ կանգ առնելու Վազգեն Ա և Գարեգին Ա Հայրապետերի շիրիմների առջև, եղանակազգային աղոթք բարձրացնելու առ Ասրված երանաշնորհ երկու Հայրապետերի հոգիների հանգստության համար, ինչպես նաև հարգանքի փուրք մասուցելու միջազգային և համաքրիստոնեական ճանաչում ու հարգանք վայելած մեծագործ այս Կաթողիկոսների շիրիմներին:

Այսուհետք թափոր շարժվեց դեպի Վեհարան, ուր պետք է իր ողջ այցելության ընթացքում հյուրընկալվեր Ռոռմի Քահանայապետը: Մի փոքր հանգիստ առնելուց հետո, ժամը 18.00-ին, Վեհարանում գեղի ունեցավ Ն. Ս. Օ. Ս. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Ռոռմի Սրբազն Քահանայապետ Ռովհաննես-Պողոս Բ-ի առանձնազրույցը, որից հետո գրույցին միացավ նաև Շաու Ազնավորը: Հանդիպման ավարտին երկու Հայրապետերը միմյանց ներկայացրեցին իրենց շքախմբերը, նվերներ փոխանակեցին և լուսանկարվեցին:

26 սեպտեմբերի 2001 թ.

Առավույյան ժամը 10.00-ին Սրբազն Քահանայապետը, ընկերակցությամբ Վեհափառ Հայրապետի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ուղևորվեց դեպի Երևան՝ քաղաքավարական այց կարարելու ՀՀ Նախագահ Ռոբերտ Քոչարյանին: Նանդիպումը գեղի ունեցավ ՀՀ Նախագահի նախավայրում: Նանդիպման ավարտին նրանց միացավ նաև ՀՀ Նախագահի ընդունիքը: ՀՀ Նախագահը և Սրբազն Քահանայապետը նվերներ փոխանակեցին: Նախագահը Ռոռմի Քահանայապետին նվիրեց Էդվարդ Շախիկյանի «Խորերդավոր ընթրիք» բրոնզե արձանը և Հաղթանակ Շահումյանի «Հանդիպում անցյալի, ներկայի և գալիքի հետ» գեղանկարը, իսկ Նորին Սրբությունը Նախագահին նվիրեց Փրկչական պատկերով մի խճանկար:

Նախագահին երաժեշտ դպրությունն ուղևորվեց դեպի Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հուշահամալիր՝ Շիծեռնակաբերդ: Շքախմբին միացան նաև արդգործնախարար Վ. Օսկանյանը, Երևանի քաղաքապետ Ռ. Նազարյանը և Ֆրանսիայում ՀՀ դեսպան Էդվարդ Նալբանդյանը: Սրբազն Քահանայապետի այցով Եղեռնի հուշահամալիր, մեկ անգամ ևս համաշխարհային հանրության ուշադրությունը ընելվեց 1915 թ. հայկական ցեղասպանության վրա: Սրբազն Քահանայապետը Շիծեռնակաբերդի լուսավոր Թենեղիկոս 15-րդ Պատի հուշաքարը, ինչպես նաև Ցեղասպանության զոհերի թանգարանին փոխանցեց սովորական ուղղված նրա նամակը, որի մեջ Հռոմի Եկեղեցապետը մնադրում է Երիխությունքերին հայկական ջարդերի համար: Հայոց սրբազն այս ուխտավեղիությունը կարուրվեց հոգեհանգստյան պաշտոն, որը Հռոմի այսօրվա Եկեղեցապետը իր աղոթքը մարդուց առ Աստված, 1915 թ. անմեղ զոհերի հիշապակին:

Ով Դադավոր ողջերի և մեռածների, ողորմի՛ր մեզ:

Լսի՛ր, ո՞վ Տեր, ողջը, որ բարձրանում է այս Վայրի՛՝

Մեծ Եղեռնի վիճերից, կոչը մեռյալների,

Անմեղ արյան աղաղակը, որ աղերսում է Աբելի արյան պես,

Ինչպես Ռաքելը, որ լախս էր իր որդիների համար, որովհետք այլև չկան:

Լսի՛ր, ո՞վ Տեր, Հռոմի Եպիսկոպոսի ծայնը,

Որ արձագանքում է իր նախորդներից մեկի՝ Թենեղիկոս ԺԵ Պապի աղաշանքին,

Երբ 1915 թվականին ճայն բարձրացրեց ի պաշտպանություն «Ծանրորեն վշտահար ու բնաջնջման սեմին հասած հայ ժողովրդի»:

Նայիր այս երկրի ժողովրդին,

Որ այսքան երկար ժամանակից ի վեր իր կսկահությունը Զեզ վրա դրեց,

Որ անցավ մեծ դանաշնների միջով

Եվ Զո հանդեպ հավարարմության մեջ երբեք չթերացավ:

Սրբի՛ր ամեն արդասուր նրա աչքերից

Եվ այնպես արա, որ քաներորդ դարի իր օրիասը

Տեղի փա լյանքի հունձքին, որը գուի առհավետ:

Հայ ժողովրդին հասցված զարհութելի բռնությունից խորապես խովված՝

Մենք մեն սարսափահար հարց ենք դայիս,

Ձե ինչպես աշխարհը դակավին կարողանում է

Ճանաչել այսքան անմարդկային խովրումներ:

Բայց Զո խոսքման հանդեպ մեր հույսը վերանորոգելով, ո՞վ Տեր,


Ննջեցյալների համար հայցում ենք հանգիսք՝ խաղաղության մեջ,

Որ անվախճան է,

Եվ դակավին բաց վերքերի համար՝ բժշկություն՝ շնորհիվ

Սիրու զորության:

Մեր հոգին անձկագին փափագում է Զեզ, Տեր, ավելի,







ԽՈՆԱՐՀՈՒՄ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՄԱՍԻՆՆՔՆԵՐԻ ԱՊՁԵՎ

A circular blue ink stamp from the State Library of New South Wales, Sydney. The outer ring contains the text 'STATE LIBRARY OF NEW SOUTH WALES' and the inner circle contains 'SYDNEY AUSTRALIA'.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՆՈՆԻԿԱԿԱՆ ՓՈԽԱՎՈՐ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Քան գիշերապահը այգաբացին,
Մինչ սպասում ենք խաջի վրա իրազործված փրկության լրմանը,
Զարկի լուսին, որն արշալույսն է անհաղթելի մի լյանքի,
Նոր Երուսաղեմի փառքին, որ մահն այլևս չի լինի:
Ո՞վ Դափավոր, ողջերի և մեռածների, ողորմի՞ր մնգ:
Տե՛ր, ողորմի՞ր, Զրիսպո՞ս, ողորմի՞ր, Տե՛ր, ողորմի՞ր:

Այս ընթացքում հայ ազգի մեծանուն զավակ, մեծ Շանտոնյեն՝ Շառլ Ազնավուրը, ամենքին հիացրեց իր «Ավե Մարիա» երգի սքանչելի կապարմամբ: Այցելության ավարտին երկու Եկեղեցապետերը վերադարձան Մայր Աթոռ Ս. Էջմիածին, որ ժամը 13.00-ին դրվեց պաշտոնական ճաշկերույթ՝ եպիսկոպոսների և կարդինալների մասնակցությամբ:

Օրվա երկրորդ մասը ոչ պակաս հագեցած էր և լի պարմական նշանակություն ունեցող դեպքերով: Ժամը 18.00-ին երկու Եկեղեցապետերը ուղևորվեցին Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցի, որ պեսքը է դեռի ունենար Եկումենիկ արարողություն: Դեռ ժամեր առաջ արդեն սկսվել էր ժողովրդի հոծ բազմության հոսքը դեպի Մայր Եկեղեցի: Բոլորը ցանկություն ունեին դրւենել երկու Հովհաննեպետին: Միասնաբար, միևնույն գաղափարին ու առաքելությանը լծված երկու մեծ Հայրապետերին, համագրիստոններին միասնության ու փոխըմբռնման երկու մեծ ջագագովներին, որոնք համապետ աղոթք պեսքը է բարձրացնեին առ Աստված՝ ողջ աշխարհի խաղաղության, եղբայրասիրության ու համայն քրիստոնյաների միասնության և քրիստոնեական Եկեղեցիների անսասանության համար:

Արարողությանը ներկա էր հանրապետության դեկապարությունը, Հայաստանում հավաքարմագրված դիվանագերներ, ինչպես նաև բազմաթիվ հյուրեր արքերկրից: Արարողության ընթացքում օրինվեցին մեր հսկապո Նոր՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մատունքները և գեղադրվեցին գալյջի առաջամասում՝ մուգքի դիմաց: Ներպայու սրբատիք այդ նշխարները պիտի մնան ի դես ժողովրդյան՝ ասպածածյին լույսի ու օրինության մի նոր աղբյոր դատնալով մեր ազգի հավաքավոր զավակների համար: Արարողության ընթացքում երկու Զահանայապետերը իրենց ողջունի խոսքն և ուղերձը հղեցին ներկա ժողովրդին.

Ն.Ս.Օ. Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ԴԱՅՈՒՅԱԿՈՍԻ ԽՈՍՔԸ

Զերդ Մրրություն,

Միրելի հավաքացյալ եղբայրներ և քույրեր,

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հոչակնան 1700-ամյա հորեւյանի նշանակալի օրերից մնան ենք ապրում այսօր, քանզի Հոռմեական Կաթողիկ Եկեղեցու իմաստնազարդ Մրրազան Հովհաննեպետի հետ Երևանի նորակառույց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցուն միասնաբար աղոթք ենք բարձրացնում առ Աստված՝ հանուն մեր Եկեղեցիների

պայծառության և նրանց եղայրական սիրո հարաբերության, հանուն համայն աշխարհում խաղաղության և ի մարդիկ հաճության:

Ձերդ Սրբություն մեկ անգամ ևս Քրիստոսադրոշ համայն մեր ժողովության մեջ անունից եղայրական սիրով ողջունում ենք Ձեր և կաթոլիկ մեր եղայրների ու քոյլերի ներկայությունը Հայաստանում: Մեզ համար խորհրդանշական է, որ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մեր Հայրապետի անունը կրող գեղեցկակատոց այս եկեղեցու սուրբ օծեանը հաջորդող արարողությունը հավատակից եղայրների եկուննիկ աղոթք է, որ Հայոց Սուրբ Գրիգորի բարեկանությամբ միահյուսել է մեր հայոց առ Աստված: Տոգու Մեր հայացքի առջև այս պահին հավատի մեծ խոսկովանող Գրիգոր Լուսավորիչ՝ համաքրիստոնեական սրբի լուսապատկերն է, ոմ կյանքը փառարանություն եղավ Աստծուն: 13 տարի մահվան գործից դեպի Աստված բարձրացող նրա աղոթքով երկնքի դուները բացվեցին հայ ժողովրդին, և Աստված Եր Էջորդ օրինեց հայոց հոգը: Մեր հայացքի առջև հավատով թժկություն գործ Տրդադ Մեծ բագավորն է Խոսի Լուսին բացած քաջ գորականի իր գորեղ հոգին: 17 դարերի եկեղեց մեր հայացքի առջև Արածանիի ջրերում մկրտվող 301 թվականի Հայաստանն է եկեղեցի դարձած: Դիրավի, դժոխքի դուներն անզամ ջանդեցին Հայոց Եկեղեցին, որ դարերի մեջ համայն է ըստել մահաքեր փորձությունների դատնության բաժակը, բայց Հայության հավատքով ապրել ու ապրում է:

Գոհություն Բարձրյալին և ծնրադիր երկրագություն, որ պարզնեց ազգի Սուրբ Թադէոս և Բարդուղիմեանու, Սուրբ Գրիգոր պատակավոր Լուսավորիչներ, ովքեր դեպի Աստված և Հարություն առաջնորդեցին հայ ժողովրդին:

Գոհություն Աստծուն Ամենակալին, որ անցնող դարասկզբին եղենոն վերապրած մեր ժողովուրդը բոնախնքում է քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հողակելու 1700-ամյակը և Հայաստանի ու Արցակի անկախության 10-ամյակը:

Ձերդ Սրբություն

Մեր ժողովուրդը երջանիկ ու միմիշարված է այն գիրակցությամբ, որ Հայ Եկեղեցու մեծ հորենյանը համաքրիստոնեական իր նշանակությամբ դունվում է քրիստոնեական Եկեղեցիների կողմից, նաև՝ Շումեական Կաթոլիկ հզոր Եկեղեցու ավանդաշատ սուրբ հարկից ներս:

Մեր ժողովուրդը երախաւագելու է Ձերդ Սրբությանը, որ ի նշան մեր Եկեղեցիների անխախտ եղայրության, Վարդիկանում կազմակերպվեց հայ հոգևոր արքեպիսկոպոսակ ցուցադրություն, որը բազմահազար այցելուների ներկայացրեց քրիստոնյա հայ ժողովուրդի հոգու, մտքի ու ձեռաց՝ հավատով կերպված զործերը: Այսօր տեսին է հիշել նաև, որ Կաթոլիկ Եկեղեցին Ձեր զիսավորությամբ հայ Եկեղեցն փոխանցեց հավատի մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսավորիչ նշխարները՝ որպես բանկ և վեր մեր դունք նաւ-

խօրյակին: Մենք շնորհակալ ենք Վաղիկան Մեր պաշտոնական այցերի ընթացքում Ձերդ Սրբության ցուցաբերած ջերմ հյուրընկալության համար: Մենք գիտենք նաև, որ Ձեր քարոզներում և ուղերձներում համար եք հիշատակում Հայոց Մեծ Դարձի 1700-ամյա հորելյանը և կարևորում երա համարիսարունեական հշանակությունը:

Քրիստոնեական իր սուրբ հավատի համար բազմից հալածված հայ ժողովուրդը երախտապարտ է Ձերդ Սրբությանը՝ Հայոց Մեծ եղեննը ճանաչելու և դատապարտելու Ձեր դիրքորոշման ու կոչի համար: Անդարակույն է, որ չարիքի մերժումը պիտի իրականանա նախ մարդկային հոգիներում, որպեսզի իսպառ վերանա նաև մարդկային հարաբերություններում, հասարակական կյանքում, ազգերի ու պետությունների հարաբերություններում: Մենք հիացած ենք Ձեր անհոգնարեն շրջագայություններով, որ ձեռնարկվում են հանուն ժողովուրդների միջև փոխհասկացողության ու բարի կամեցողության գորացման:

Արդարն, աշխարհում դեռ շակր են բոնություններն ու անարդարությունները, բազում՝ մոլորությունները, որոնց դեմ հանդիման՝ քրիստոնեական Եկեղեցիները առավել զգուն են միմյանց աջակցության ու շանքերի մեկտեղման անհրաժեշտությունը:

Ձերդ Սրբության հետ քրիստոնեական Եկեղեցիների համագործակցությունը սերդացնելու ջերմ ջարագովներ էին Մեր նախորդ լուսահոգի Հայրապետերը՝ Վազգեն Ա և Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսները, ովքեր հիմնաքարերը դրեցին նորակառուց այս եկեղեցու: Մեզ համար այսօր բազմակի ուրախություն է Ձերդ Սրբությանը ընդունել այս Սուրբ Տաճարում, որը հայոց ազարտության օրինյալ երկնքի ներքո վկայությունն է մեր հավատի կենդանության և առ Աստված մեր Ուխտի նորոգության:

Մենք մնում ենք շարունակող քրիստոնեական Եկեղեցիների համագործակցությանն ուղղված Մեր նախորդ Հայրապետերի քայլերի, քանզի Աստված «Եթ մեզ զպաշտօն հաշտութեան» (Բ Կորն. 5. 18): Միդու ու համերաշխության մեջ է մարդկության ապագան: Աղոթենք, որ մեր բոլոր գործություն հաղթանակի Քրիստոսի Մերը: Աղոթենք, որ Ամենախնամ Աստված զորացնի և զորակից լինի մեզ բոլորին մեր պարտքի մեջ և օրինի բոլոր բարի գործերը՝ ի շահ աշխարհի խաղաղության ու ապահովության, նրա շենացման ու բարօրության:

Աղոթք ենք բարձրացնում առ Աստված քրիստոնեական բոլոր Եկեղեցիների հասարակունության, պետությունների ու բոլոր ժողովուրդների համերաշխ փոխհարաբերության համար: Թող առաքելապատիկ Հայոց Սուրբ Գրիգորի բարեկառությանը, Հայոց Մեծ Դարձի 1700-ամյակի հոգենորդ խորհրդով Երևանի Մայր Եկեղեցին միջի լինի սիրո, եղբայրության ու համագործակցության ոգու հանդիպակայր:

Մենք հավատում ենք, որ երրորդ հազարամյակում իր միասնականությամբ առավել գործադրություն է լինելու Քրիստոն Սեպ. Ընդհանրական, Առաքելական և Սուրբ Եկեղեցին՝ հանուն իր աստվածահասկութ փրկագործական առաջնայիշյան:

Զերդ Սրբություն, գոհունակ սրբով Ձեզ ենք փոխանցում Դումում Ձեր կողմից Սեպ համանված մեր հավաքի հոր՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի նշանադրը, որպեսզի սուրբ մատուքներով Ձեր օրինությունը բերեք բարեպաշտ ժողովրդին:

Ձո՞դ Տիրոց Սեպ, Շնորհը և Խաղաղությունը լինի մեզ հետ այսօր և ընդմիշտ ամեն:

ՇՈՎՃԱՆՆԵՍ-ՊՈՂՋԸ Բ ՊԱՊԻ ԽՈՍՔԸ

«Որքան քարի, որքան վայելուչ է, որ եղբայրները բնակվում են միասին» (Սաղմ. ԾԼԲ 1):

Ձո՞դ գովյալ լինի Շնորհ Քրիստոսը:

Անցալ կիրակի Զերդ Սրբությունը և Էջմիածնի համայն կաթողիկոսությունն ուրախությունն ունեցան օծելու Ս. Գրիգոր Լուսավորչի այս նորակառուց դաճար՝ որպես արծանավայել հուշարձան մեր Տեր և Փրկիչ Շնորհ Քրիստոն հանդեպ լուսաւոյթ դարերի Հայաստանի հավատարմության: Այս վայելազեղ սրբավայրը վկայում է ձեր հայրերից ավանդված հավաքը և մեզ բոլորին խոսում հույսի մասին, որն այսօր հայ ժողովրդին մղում է վերանորոգ վարահությամբ և քաջարի վճռականությամբ նայելու ապագային:

Ինձ համար Ձերդ Սրբության հետ այս էկումենիկ արարողությանը նախազանին անձնական ուրախության մեջ աղբյուր է: Կարծես շարունակությունն է անցյալ դարի Շոտի Ս. Պետրոս Մայր լրամարում կարտարված մեր հասարակաց աղոթքի: Այնուն միասնաբար հարգանք մարտուցեցինք Ս. Գրիգոր Լուսավորչի մատուքներին, և Տերն այսօր մեզ շնորհում է նույն կրկնել այսպես՝ Երևանում: Ողջագործում եմ Ձերդ Սրբությունը եղայրական միևնույն սիրով, որով Դուք ինձ ողջունեցիք Շոտ կարտարած Ձեր այցի ընթացքում:

Երահիտապարս եմ հանրապետության մեծարգո Նախագահին՝ այս էկումենիկ հանդիպմանն իր ներկայության համար՝ որպես նշան մեր հասարակաց համոզվածության, որ ազգը ծաղկուն ու քարգավաճ է լինելու՝ շնորհիվ իր բոլոր հասպարությունների փոխադարձ հարգանքի և համագործակցության: Այս պահին միտքս ուղղվում է Սեպի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Ն. Ս. Արամ Ա-ին, ինչպես նաև Երևանի Կուղանդնուպուտ հայոց Պատրիարքներին Տիրոց սիրով առաջում եմ նրանց իմ ողջոյնը: Սլրդանց ողջունում եմ քաղաքացիական և եկեղեցական բոլոր մարմինների

հարգելի անդամներին և այս երեկո պատրեղ ներկայացված համայնքներին:

Եթիւ Ս. Գրիգորի քարոզույան շնորհիվ Տրդակ Գ արքան դարձի եկամ, մի նոր լուս ծագեց հայ ժողովրդի տեսական պատմության մեջ: Տավարի ընդհանրականությունն անբաժանելիորեն միացավ ձեր ազգային ինքնության հետ: Քրիստոնեական հավաստ մնացուն կերպով արմադրացավ այս երկրու՝ Արարատ լեռան շուրջը ժողովրդ, և Ավելարանի խոսքը խորապես ազդեց հայ ժողովրդի լեզվի, ընդհանեկան կյանքի, մշակույթի և արվեստի վրա:

Իր ուրույն ինքնությունը պահպանելով և զարգացնելով հանդերձ՝ Տայապահանց Եկեղեցին չվարանեց քրիստոնյա այլ ավանդությունների հետ երկխոսության մեջ հանձնառու լինել և նրանց հոգևոր ու մշակութային ժառանգությանը հասնել: Սկզբից ներ արդեն ոչ միայն Սուրբ Գիրքը, այլ նաև աստորի, հոյս և լարին հայրերի գլխավոր գործերը հայերենի թարգմանվեցին: Տայական ծեսն իր յուրահարուկ ներշնչումը քաղեց Արևելքի և Արևմուտքի Եկեղեցու ծիսական ավանդություններից: Շնորհիվ հոգու այս բացառիկ բացվածք՝ Տայապահանց Եկեղեցին իր պատմության ընթացքուն յուրահարուկ կերպով զգացու է եղել քրիստոնյաների միության հարցին: Սուրբ Տայապահանը ու վարդապետներ, ինչպիսիք են Սուրբ Սահակ Պարթևը, Բարգեն Օքմանեցին, Զաքարիա Չագեցին, Ներսես Շնորհալին, Ներսես Լամբրոնացին, Ստեփանոս Սամբատեցին, Տակոր Զուղայեցին և ուրիշներ, քաջ ճանաչված են Եկեղեցու միության նախանձախնդրությունը ունենալու համար:

Եյուզանդիի կայսերն ուղած իր նամակում Ներսես Շնորհալին բնութագրում է Եկումնենիկ երկխոսության սկզբունքները, որոնք ոչինչ չեն կորորել իրենց կարևորությունից: Իր բազմաթիվ հայրնապետություններից նա պնդում է այն իրողության վրա, որ միության վիճակուով պարտականությունն է ամբողջ հասարակության և ցի կարևի թույլապրեն, որ Եկեղեցների միջև սղեղօձեն ներքին բաժանումներ սրանց բացի, նա ուսուցանում է, որ անհրաժեշտ է հիշողությունների բուժումը՝ հաղթահարելու համար անցյալի վիրավորանքի զգացումներն ու նախապաշտումները, ինչպես նաև հարկավոր է փոխադարձ հարգանքը և հավասարության զգացումը խոսակցների միջև, որոնք ներկայացնում են համապատասխան Եկեղեցները հուսկ, նա ասում է, որ քրիստոնյաները պետք է ունենան ներքին խորհանում, որ միությունը էական է ոչ թե ուսումնավարական առավելության կամ քաղաքական շահի համար, այլ Ավելարանի քարոզության օգույի համար, ինչպես հրամայում է Քրիստոսը:

«Որքան բարի, որքան վայելու է, որ եղբայրները բնակվում են միասին» (Սաղմ. ԾՂԲ 1): Եթիւ 1970 թվականին Դովիաննես Զ Պապը և Վազգեն Ա Կաթողիկոսը փոխանակեցին իսահաղության համրուրը, ծնունդ դրվին Եղբայրական հարաբերությունների մի նոր դարաշրջանի՝ Շունի Եկեղեցու

և Դայագրանյաց Եկեղեցու միջն: Նրանց հանդիպմանը շուպրով հաջորդեցին ուրիշ կարևոր այցեր: Ես ինքու իսկապէս ուրախ հիշարքակներ ունեմ Նորին Սրբություն Գարեգին Ա-ի Շոտ կալվարիած այցելություններից՝ նախ որպէս Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո, ապա որպէս Կաթողիկոս Ամենայն Հայոց: Ակած այն ժամանակից, երբ որպէս դիկորդ մասնակցեց Վարդիկանի Բ Տիեզերական ժողովին, Գարեգին Ա Կաթողիկոսը երբեք տաղարեց գործել Արևելքի և Արևելուղի քրիստոնյաների միջն եղայրական հարաբերությունները և գործնական համագործակցությունն աշխուժացնելու համար: Ձերմասն փափագեցի այցելել Նրան այսպես՝ Դայագրանում, բայց նրա վարառողջությունը և ապա վաղաժամ մասի այն անհնար դարձրին: Շնորհականությունն եմ հայրնուն Տիրոջը՝ Եկեղեցու այս մեծ մարդու մեջ պարզեած լինելու համար:

Զերդ Սրբություն ուրախ եմ Շոտին ինձ կալվարիած Ձեր այցին, երբ Ձեզ ընկերակցում եք եպիսկոպոսների և հայ հավարացյաների մի պարտիդակություն, փոխադարձել կարողանալու համար: Դայագրան և Սուրբ Քոյսիածին այցելելու Ձեր վեհանձն հրավերն այն ժամանակ մեկնաբանեցի իրդև բարեկանության և Եկեղեցական սիրո մի մեծ նշան: Երկար դարեւ շարունակ Դայագրանյաց Եկեղեցու և Շոտին Եկեղեցու միջն հարաբերությունները եղել են ուժգին և ջերմ, և ամբողջական միության փափազը երբեք լիովին ց վերացել: Իմ այսօրվա այցը վկայությունն է մեր միանական ռդանքի՝ հասնելու այն ամբողջական միությանը, որը Տիրը ցանկանում է Իր աշակերտների համար: Կանգնած ենք Արարար լուսն դիմաց, ուր, ավանդություն համաձայն, կայք գուավ Նոյյան դրապանը: Ինչպէս աղավնին վերադարձավ խաղաղության և սիրո ձիքենու ճյուղով (հմնդ. Ծննդոց Հ 11), նմանապէս աղոթում են, որ իս այցը լինի մեր միջն արդեն իսկ գոյություն ունեցող հարուստ և բեղուն համագործակցության նվիրաբերում:

Կաթողիկ Եկեղեցու և Դայագրանյաց Եկեղեցու միջն գոյություն ունի իրական և սերդ միություն, քանի որ երկուսն ել պահպանել են առաքելական հաջորդականությունը և ունեն վավերական խորհուրդներ՝ մասնահայտուկ կերպով մկրտությունը և հաղորդությունը: Այս գիրակցությունը պեսքը է մեզ ներշնչի առավել ուժգնորեն գործելու, ամրապնդելու համար մեր Եկումենիկ երկխոսությունը: Դավադի և սիրո այս երկխոսության մեջ ոչ մի հարց, որքան էլ դժվար լինի չպետք է անպեսպի: Քրիստոնյաների միության փնտրությունը գործնքացում, Շոտի Եպիսկոպոսի պաշտոնի կարևորությանը գիրակից, իմնդրեցի, (իմ «Զի եղիցին մի» («Ut unum sint») խոսքը ու Ակավող շրջաբերական նամակում), որ մեր Եկեղեցիների եպիսկոպոսները և աստվածաբանները անդրադառնան ու մտածեն «այն կերպերի վրա, որոնց մեջ այս պաշտոնը կկարողանան երկուսընք ճանաչված սիրո ծառայություն իրականացնել» (հմը. 95):

Եկեղեցու առաջին դարձրի կանքի օրինակը կարող է մեզ առաջնորդել այս ընդունության մեջ: Իմ վատ աղոթքն է, որ կրկին իրագործվել կարո-

դանա այն «պարզեների փոխանակումը», որի սքանչելի օրինակը տվեց առաջին հազարամյակի Եկեղեցին: Դշողությունն այն ժամանակի, որի ընթացքում Եկեղեցին շնչում էր «երկու քոքերով», բող խթանի Արևելքի և Արևմուղքի քրիստոնյաներին միասին քայլելու հավագի միության և օրինական դարբերությունների հարգանքի մեջ՝ միմյանց ընդունելով և զորավիճ կանգնելով՝ որպես Քրիստոսի միակ Մարտնի անդամներ:

Միասիրու, հիացական ակնարկով նայենք Քրիստոսի՝ մեր խաղաղությանը. Ով միավորեց այն, ինչը մի ժամանակ բաժանվել էր (հմնք. Եփ. Բ 14): Իրականում ժամանակը շրապեցնում է մեզ, և մեր պարտականությունը սրբազն և անհետագելի պարտականություն է: Պարտավոր ենք հոգակել փրկության Բարի լուրը մեր ժամանակաշրջանի արանց և կանանց: Համայնավարության և Այութապաշտության հոգնոր դարձարկությունը փորձադրությամբ զգալուց հետո նրանք փնտրում են կյանքի և երջանկության արահետը. Ավելարանի ծարավն ունեն: Նրանց նկարնամբ մեծ պարասիստարկություն ունենք, և նրանք մեզնից ակնկալում են հավագի և փոխադարձ սիրու մեջ միության մի համոզիչ վկայություն: Քանի որ գործում ենք ամբողջական հաղորդության համար, միասին անենք այն, ինչը չպետք է անենք անջապ: Աշխարհներ միասին՝ մեր դարձեր ինքնությունների և ավանդությունների հանդեպ ամենայն հարգանքով: Երբեք՝ քրիստոնյան քրիստոնյայի դեմ, երբեք՝ Եկեղեցին Եկեղեցու դեմ: Նակատակը՝ քայլենք միասին, ձեռք ձեռքի դված, որպեսզի քանի մենք ենք դարի և նոր հազարամյակի աշխարհը կարողանա հավատա:

Դայերը միշտ էլ մեծ հարգանք են ունեցել Քրիստոսի խաչի հանդեպ: Դարերի ընթացքում խաչը նրանց համար եղել է հույսի անսպառ աղբյուր՝ չարտարանքների և բարտապանքների ժամանակներում: Այս երկու հոգեհույզ հայուկանիշն են բազմաթիվ խաչքարերը, որոնք վկայում են քրիստոնեական հավագի նկարնամբ ամրակուր հավատարմությունը: Տարվա այս շրջանում Դայ Եկեղեցին կարողանա դիմումը մեկը՝ Խաչվերացը:

Երկրից խաչափայտի վրա բարձրացված Քրիստոս Դիտուղ՝ մեր փրկությունը, կյանքն ու հարությունը, մեզ բողոքիս ձգում է դեպի Ինքը (հմնք. Դուկի ԺԲ 32):

Ո՞վ խաչ Քրիստոսի, մեր ճշմարի՛ր հույս, ամեն անգամ, որ մեղքը և մարդկային տկարությունն առաջացնում են բաժանում, պարզեի՛ր մեզ ներկալու և միմյանց հետ հաշվելու ուժը: Ո՞վ խաչ Քրիստոսի, դո՛ն նեցուկ եղիր մեզ՝ մինչ գործում ենք վերանորոգելու համար ամբողջական հաղորդությունը նրանց միջև, ովքեր խաչված Տիրոջը դիմում են որպես մեր Փրկին և մեր Աստծուն: Ամեն:

Ընորհակալություն ձեր ուշադրության համար և Աստծո օրինությունն եւ հայցում ամբողջական միությանն ուղղված մեր քայլերին:

27 սեպտեմբերի 2001 թ.

Պարմության մեջ առաջին անգամ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հոռոմի Սրբազնանայապերը մագուցեց լադինածես Սուրբ Պատրիարք, Մայր Աթոռի նորակառույց Բաց Խորանի վրա: Դեռ նախորդ օրվանից սկսած Մայր Աթոռ էին զալիս բազմահազար ուխտավորներ ոչ միայն Հայաստանի փարբեր շրջաններից, այլ նաև հարևան Վրաստանից, իսկ Պատրիարքի սկզբին հավաքացյալների բազմությունը հասավ աննախադեպ մեծ չափերի: Բացի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հավաքացյալներից, ներկա էին նաև Զավախիքի հայության կաթոլիկ հավաքածի մեր շար հայրենակիցներ:

Սրբազն Զահանայապերը, ընկերակցությամբ Վեհափառ Հայրապետի և Հայաբանի կաթոլիկների առաջնորդ Ներսես արքայիսկոպոս Տեր-Ներսեսյանի, շրջապատված բարձրասրբինան հայ և կաթոլիկ հոգևորականներով, դրւու գալով Մայրավանքից՝ Պատրիարքի թափորով ուղղվեց դեպի Բաց Խորան, որ նրան ծափողույններով դիմավորեցին հավաքած բազմահազար հավաքացյալները:

Սրբազն Պապը իր մաղթամբն սկսեց հայերեն՝ արդասանելով «Յանուն Շօր Եւ Որդոյ Եւ Նոգոյն Սրբոյ. ամեն» և «Խաղաղութիւն ամենեցուն» բառերը: Պատրիարքի ընթացքում իր ողջույնի խոսքն ասաց նաև Ներսես արքայիսկոպոս Տեր-Ներսեսյանը, որն իր խոսքն սկսեց Պեղմաթաշյանի հանրահայր «Ըն ասդեօք ինչ կա սիրուն, քան զանձկալի եղբայր անուն» բառերով, ի մասնավորի շեշտելով, որ մի նոր ասպարեզ ու դարաշշան է բացվում երկու քույր Եկեղեցիների համագործակցության համար: Պատրիարքի երաժշտական մասը ապահովում էր Մայրավանքի երգչախումբը, որը մերթ կարարում էր հայերեն մեր Պատրիարքից հավաքածներ, մերթ լարիներն Կաթոլիկ Պատրիարքից: Պատրիարքի ընթացքում մի քանի կաթոլիկ հոգևորականներ, ըստ արևմտյան Եկեղեցու ծեսի, ժողովրդի մեջ պետքեցին և Ս. Նադորդություն բաժնեցին ներկա հավաքացյալներին: Արձակման աղոթքից հետո զույգ Հովհանքերը հայերեն օրինեցին ներկա հավաքացյալ բազմությանը:

Ս. Պատրիարքի սկզբում համայն ժողովրդին իր պարզամտ ու օրինության խոսքը հղեց Ն. Ս. Օ. Ս. Գարեգին Բ Ամենայն Հայոց Մայրապետը:

Ն.Ս.Օ. Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ

Սիրեցյալ եղբայր ի Քրիստո,

Սիրելի բարեկացը ժողովուրդ,

Այսօր Սուրբ Պատրիարքի արարողությամբ դեպի երկինք ևն բարձրանում Քրիստոսի Մեկ և բազմանդաւ ընդունիքի զավակներին աղոթքները՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հոգակելու 1700-ամյակի առիջուն:

Պարմությունը չի հիշարակում, որ եռքեւ այսպես ցնծագին, համազասյին ու համազրիստոնեական ընդգրկունով պոլարիստի Հայոց Մեծ Դարձի հորեցանը: Պարմությանը հայրնի է սակայն, որ 301 թվականի 150-ամյուն-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԽՈՐԿՈՂՈՒՄ



կը հայ ժողովորդը նշանավորեց Ավարայրի դաշտում՝ արյամբ պաշտպանելով քրիստոնեական մեր հավաքը: Գոհություն Երկնավորին, որ 1700 տարվա մեր հավարարության վկայությունը պատճեց հոքեյանական այս տոնախմբության լոյսով ու փառքով: Արդարն, «Ո՞վ հավաքաց Տիրոջը և ամոթով մնաց» (Սիրաք Բ 11):

Ուրախ ենք և զգացված, որ տոնական այս օրերին Ձերդ Սրբությունը Սուրբ Հջմիածնում է՝ կաթոլիկ մեր եղբայրների ու քոյլերի հետ խնդակից մեր ժողովորդի ուրախությանը: Ձերդ Սրբության այցը Դայասպան ամրապնդելու է մեր Եկեղեցիների եղբայրական սերը, բարի հարաբերությունները: Այս հավատով այսօր մեր զավակները աղոթակից են Ձեզ, կաթոլիկ մեր քոյլերին ու եղբայրներին և մասնակից նորակառուց Բաց Խորանում Ձերդ Սրբության կողմից լադիներենով մակուցվող Սուրբ Պատրագին: Մեկն է աղոթքի լնուն: Մենք առ Քրիստոս նոյն հավաքով, նոյն սիրով ու հոյսով ենք պաշտոն մակուցում: Ասպիս լուս է մեզ ինչպես գրաբարով, լադիներենով, այնպես էլ բոլոր լնուններով: Արդարն, ունենք նոյն Տիրոջ շնորհի փրկության ու հավաբեր նարության, և Ասպիսածային Սիրո նոյն ակունքից բխող արժեքներով են կերպված մեր՝ քրիստոնյա ժողովությունների մշակույթները, որ որքան էլ բազմակեզու և բազմերանց՝ հասկանալի ու հարազար են միմյանց՝ կենդրունում ունենալով Մարդասերն Ասպիս ու Տիրոջ Սուրբ Ավելարանը:

Տավարի մեր մեկությունը այն կարևորն է, որ առանձնահայրեկություններով հանդերձ միավորում է մեր Եկեղեցիները նոյն առաքելության շուրջ և կոչում՝ գործել սիրով միաբան ու միասնաբար: Փառք ենք բարձրացնում առ Ասպիս, որ օրավոր նոր քայլեր է անում քրիստոնեական Եկեղեցիների էկումենիկ համագործակցությունը՝ զորացնելու համար փոխհասկացություն և համերաշխության ոգին Քրիստոսի Ընդհանուրական Եկեղեցուց ներս: Այս Ասպիսածահաճն նպատակին են ուղղված նաև Ձերդ Սրբության անդու ջանքերն ու անհոգնաբեկ այցելությունները:

Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս ներկա դարաշրջանում մարդկությունը աննախընթաց նվաճումներ է արձանագրում գիրա-տեխնիկական բնագավառում, ձևավորվում են աշխարհաքաղաքական նոր իրավիճակներ, առաջ են գալիս հասարակական կյանքի ու միջազգային փոխընթրունան ու հարաբերությունների նոր պահանջներ, և քրիստոնեական Եկեղեցիներու կանգնած ենք աշխարհում նոր զարգացումներն ընբռնելու և սերպորեն համագործակցելու, մեկնեղված ուժերով մեր ջանքերն արզասավորելու անհրաժեշտության առօք՝ հանուն «Տիրոջ այգու» հոգածու խնամքի ու պահպանության:

Բացվող հազարամյակը կարուր է առ Ասպիս հավաբեր իմաստավորման, քրիստոնեական բարոյականի արժենորման, որպեսզի մարդը նյութական աշխարհի ճանաչողության մեջ չընոտան Ասպիս գոյության մասին և դեռևս արարագործ տիեզերքը, ուր ամենայնը շաղկապված է ու ներդաշ-

նակ, որպեսզի գիտության նվաճումները ծառայեն միայն բարի գործերի, բարիքի սրեղծմանն ու մարդկության երշանկությանը:

Այդ, միասնաբար հայցնք Բարձրյալից, որ սուրբ ու պարվական Բր Խաչի հովանու ներքո խաղաղ պահպանի աշխարհի համայն և իր նոր կանքը կերպող Տայաստան երկիրը: Թող Տերը բարի կամեցողության մեջ առաջնորդի Քրիստոսաւեր ժողովուրդներին, որպեսզի մարդիկ տեսնեն եղայրաւեր մեր ընթացքը, մեր բարի գործերը ու փառավորեն մեր Տորը, որ երկնքում է այսօր և միշտ և հավիպյան ամեն:

ՇՈՇՄԻ ՊԱՐ ՔԱՐՈՁ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ ԲԱՅ ԽՈՐԱՆԵՒՆ

Ծայր սիրենի եղայրներ և քոյրեր, ողունում և օրինում եմ ձեզ բոլորիդ: «Տերը իմ լուսն է ու կյանք» (Սաղմ. ԻՉ 1):

Սաղմուերգով այս խորքերը հայերի սրբերում հնեցին, երբ քրիստոնեական հավատը, այս հողում Թաղենու և Բարդուղիմենու առաջալների կողմից առաջին անգամ հոգակված, դասենոթ դար առաջ դարձալ ազգի կրոնը: Այսուհետեւ քրիստոնյա հայերն ապրեցին ու մահացան մեր Տեր Դիուս Քրիստոսի շնորհի ու ճշմարտության մեջ (հմնք. Ռովի. Ա 17): Դարենի ընթացքում Ավելարանի լուսն ու փրկությունը ներշնչեցին ու զորավիզ կանգնեցին ձեզ ձեր պանդիստության ամեն մի հանգրվանում: Այսօր, Սուրբ Պատրիարքի խորհրդակարարությամբ, որ Նորին Սրբություն Գարեգին Բ Կաթողիկոսը եղայրական սիրով հրավիրեց ինձ մասուցելու այս սուրբ հոդի վրա, ուր Աստծո Որդին հայրնելոց հավատի ձեր հորը՝ Ս. Գրիգոր Լուսավորչին, մենք հարգանք ենք մարտուն և հիշարակում Տայաստանի հավաքարտությունը Դիուս Քրիստոսին:

Դուքի եպիսկոպոսը որքան սպասեց այս օրվան: Անհուն ուրախությամբ ողունում եմ Նորին Սրբություն Կաթողիկոսին, իր եղայրակից արքեպիսկոպումներին, եպիսկոպումներին և նայ Առաքելական Եկեղեցու հավատացաներին: Զերմապես ողունում եմ Ներսես արքեպիսկոպոս Տեր-Ներսեսյանին և միաժամանակ Վարդան աջակից արքեպիսկոպոս Քեշիշյանին, և նրանց միջոցով՝ մարտուներս ուղղվում են ամենասպատիվ Ներսես Պետրոս Ժթ Պատրիարքին, եպիսկոպումներին և աշխարհացրին հայ կաթողիկ հավատացաներին: Ողջագուրում եմ քահանաներին, կրոնակորներին ու կրոնավորուհիներին և ձեզ բոլորի՝ նայ Կաթողիկ Եկեղեցու որդիներիդ ու դուսպրերիդ: Բարի գալուստ եմ մաղթում Կովկասի լարին և առաքելական տեղապահ Զուգեպատե Փազուրթ եպիսկոպոսին և բոլոր նրանց, ովքեր ժամանեն են Վրաստանից և Կովկասի այլ կողմերից:

Երկար դարիներ հայ քահանայի ձայնն այլևս չհնչեց ձեր եկեղեցիներում, և այսուհանդերձ՝ ժողովրդի հավատի ձայնը դակավին լսվում էր՝

Պետրոս առաքյալի հաջորդի հանդեպ բարեպաշտությամբ ու որդիական միրով լի:

Երբ չարասիրդ մարդիկ գնդակոծեցին Փանիկի զանգակալրան խաչը, նրանք փորձում էին անպարփել այն Աստծուն, որին չէին հավաբում: Բայց նրանց բռնությունն ուղղված էր նախևառաջ ժողովրդի դեմ, որը հավաքել էր քարեր՝ պուն կառուցելու Տիրոց համար. ձեր դեմ, որ այդ եկեղեցիների Մկրտության Ավագաններում ստացել էիք հավատի, իսկ դրոշնի խորհրդով՝ Սուրբ Շոգու պարզելը. ձեր դեմ, որ այդ եկեղեցիներում համախմբվում էիք՝ մասնակցելու սուրբ Հաղորդության երկնային սեղանին, ձեր դեմ, որոնց ամուսնություններն այդ աղոթավայրերում օրինվել էին այնպէս, որ ձեր ընդունիքները լինեին սուրբ, և որ այնպես ձեր վերջին ողջույնն էիք դվել ձեր սիրելիներին, նրանց հետ մի օր Աստծո Արքայության մեջ վերամասնաւու ապահով հույսով:

Կրակ բացեցին խաչի դեմ, այնուհանդեռձ դուք շարունակեցիք երգել Տիրոց գովաբանությունը՝ պահպաններով ու պատվելով ձեր վերջին ժողովրդականիք եկեղեցական սքննը՝ որպես ձեր մեջ նշանը նրա ներկայության: Երգում էիք ձեր շարականները՝ վարահ այն գիրակցությամբ, որ նրա ձայնը Երկնքից միացած էր Քրիստոսի՝ հայլիրենական Մեծ Քահանայապեսին ուղղված ձեր փառաբանությանը: Պաշտամունքի ձեր վայրերը զարդարում էիք ձեր հնարավորությունների չափ լավագույն կերպով. և՛ Դրուսի, և՛ Եր Մայր Մարիամի պատկերներից բացի՝ այնուն հաճախ ներկա էր Շումի Քահանայապեսի պատկերը՝ Նայ Առաքելական Եկեղեցու Կաթողիկոսի պատկերի հետ միացելու: Ըմբռնել էիք, թե ո՞որ որ էլ քրիստոնյաները բարապում էին, թեն միմյանց միջն բաժանված, արդեն իսկ գոյություն ուներ մի խոր միություն:

Սա է պատճառող, որի համար ձեր ներկա պատմությունը չի դրոշմվել Եկեղեցիների միջև պիտոր ընդդինությամբ, որը քրիստոնյաներին չարչարեց այսպեսից ոչ շաբ հետո երկրներում: Ենո հիշում եմ, երբ գաղափարախոսական անասրվածության ձմեռը հազիկ անհայտացած, երջանկահիշարքակ Վազգեն Ա Կաթողիկոսը Շումի Սուրբ Աթոռին հրավիրեց մի քահանա առաքել Շայատանի կաթողիկների համար: Ընդդեմ այն ժամանակ ձեզ համար հայր Կոմիտասին՝ Միհրար արքահոր հոգնոր որդիներից մենքին: Այս դարի Միհրարյան միաբանությունը պոնախմբում է իր հիմնադրության 300-ամյակը: Երախտագիրություն ենք մարդուն Տիրոցն այն փառակոր վկայության համար, որ դվեցին վանականները և հայրնուն ենք իրենց մեր երախտագիրությունն այն ամենի համար, որ կարարում են հայ մշակույթի վերանորոգությանն ի նպաստ:

Ձես այլևս երիդասարդ չէր հայր Կոմիտասը, անմիջապես և իանդավառությամբ ընդունեց միանալ ձեզ՝ վերակերպումի դժվարին հանձնառությամբ: Եկակ Փանիկում ապրելու, որ վերանորոգեց այն խաչը, որը զինալեները փորձել էին կործանել: Նայ Առաքելական Եկեղեցու հոգնորականի


և հավատացյալների հանդեպ եղայրական հոգով վերաբացեց և քարեզման էկեղեցին կաթողիկոնների համար, որոնք այն պաշտպանել էին այս քանի ուրիշ ժամանակ։ Այժմ նա համազում է այդ եկեղեցու կողմին, նաև մահվան մեջ մուր իր ժողովրդին, և այժմ սպասում է արդարների հարությանը։

Տարածայում Վազգեն Կաթողիկոսի եղայրական հասկացողության շնորհիվ, որն Ազգային Ժողովում պաշտպանեց Հայաստանի կաթողիկոնների իրավունքները, ի վիճակի եղան որպես հովիլ առաքել ձեզ մեկ այլ միմիքարյան՝ հայր Ներսեսին, որին եպիսկոպոս օծեցի Ս. Պետրոսի Մայր տրամադրություն։ Նա որդին է հավատի մի խոսքովանո՞յի, որն իր հավատարմությունը Քրիստոնի վճարեց համայնավար քանիցերում։ Ներսես արքեպիսկոպոսին կամենում են ուղղել երախտագիրության մի հայուկ խոսք։ Երբ իրենից պահանջվեց, նա պարդասպականորեն թողեց Վեներիկի Սուրբ Դազար կղզու միմիքարյան սիրեցյալ հասարակությունը՝ զարու, իր ծառայությունը մարդուցելու ձեր մեջ՝ որպես սիրավիր հայր և հարգված ուսուցիչ։ Այժմ նրան օգնում է Վարդան արքեպիսկոպոսը՝ Միհրան աքրահեր մնկ այլ հոգևոր որդին։ Նրան նոյնական մաղթում են հովվական երկարաւոր և բեղուն գործունեություն։

Իր նախկին գեներալակի հետ, որը հենրագայում դարձավ Իրանի հայ կաթողիկոնների եպիսկոպոս, իսկ այժմ՝ աջակից արքեպիսկոպոսի, քահանաների և մայրապետների հետ, որոնք իրենց ուժերը այսքան վեհանձնորեն սպառում են Ավելասարանի սիրո համար, Ներսես արքեպիսկոպոսը սովորեցրեց ձեզ և ցուց տվեց, որ Կաթողիկ Եկեղեցին այս երկրում մրցակից չէ։ Մեր հարաբերությունները դրոշմված են եղայրական հոգով։ Ինչպես լուրջան լուրիներին քահանայապետի պատրիարք գետեղել էիր կաթողիկոսի պարկերի կողմին, այնպես էլ այսօք՝ այս ծիսակալարության ընթացքում, աղոթելու ենք ոչ միայն կաթողիկել նվիրապետության, այլ նաև Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի համար։

Ձեր ազնվությամբ, Ձերդ Սրբություն ։ Դոք Շոտի Եպիսկոպոսին հրավիրեցիք կաթողիկ համայնքի հետ Սրբազն Պարտաքան Սուրբ Էջմիածնում մարդուցելու, և այս ուրախ առիթով Դոք պատվում եք մեզ Ձեր ներկայությամբ։ Մի թե սա մեր հասարակաց հավատքի հրաշալի նշան չէ։ Արդյոք այս իրողությունը չի արդահայրում բազմաթիվ եղայրների և քոյրերի վառ բաղանքը, որոնք ցանկանում են դեսնել մեր արագոնքաց առաջադիմությունը միության շավիղներում։ Իմ սիրով անհամբեր է արագացնելու այն օրվա գալուստը, երբ միասին կմասնութեան պատվածային Զոհի, որը միայն մեզ բոլորին դարձնում է մեկ։ Ձերդ Սրբություն այս խորանում, որ Ձերն է, իննդրում են Տիրոջից՝ ներեւ միության դեմ գործած մեր անցալ թերությունները և առաջնորդել մեզ դեպի այն սերը, որը գերազանցում է որևէ պարվար։

ՄԱԿԱՐԱԳՈՒՅՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽԵՂԻ ԴՐԱՄԱԿԱՆ



Ժայռ սիրելի կաթողիկ եղբայրներ և քոյրեր, իրավացիորեն պարծենում եք ձեր հայրերի այս հնամյա երկրով, և դուք ինքններդ ժառանգորդներն եք նրա պատմության և մշակությի: Կաթողիկ Եկեղեցու զովարանությունն առ Աստված բարձրանում է բազմաթիվ ժողովուրդներից և բազմաթիվ լեզուներով:

Բայց մեկ-միակ մեղեղի մեջ զանազան ձայնների այս շաղախումը ոչ մի կերպ չի ջնջում ձեր հայկական ինքնությունը: Դուք խոսում եք ձեր նախնիների քաղցրահունչ լեզվով: Ձեր ծնար երգում եք այնպես, ինչպես ձեզ սովորեցրել են Դայ Եկեղեցու սուրբ հայրերը: Առաքելական Եկեղեցու ձեր եղբայրների հետ միասին, վկայում եք միննոյն Տեր Տիտոսին, որը բաժանված է: Դուք չեք պատրիանում ոչ Ապողոսին, ոչ Կենասին, ոչ էլ Պողոսին. «Դուք Քրիստոսին եք, իսկ Քրիստոս՝ Աստծուն» (Ա Կորնթ. Գ 23):

Որպես հայեր, մյուս բոլոր հայերի միննոյն իրավունքներով ու պարտականություններով, դուք օգնում եք վերակերպելու ազգը: Այս հոյժ կարելվոր պարտականության մեջ, վարահ եմ, Դայ Առաքելական Եկեղեցու մեր եղբայրներն ու քոյրերը կաթողիկ համայնքի ամսամեներին նկատում են իրեն միևնույն մոր՝ Դայապանի օրինակ հոդի, մարդիրուների և միանձների, գիրունների և արվեստագենների երկրի զավակները: Տեղի ունեցած բաժանումներն անեղծ յոդեցին արմագները: Միջյանց հետ պետք է մրցենք ոչ թե բաժանումներ սղեղծելու կամ երկուսիք իրար ամրապնանելու, այլ փոխադարձարար սեր ցուցաբերելու հարցում: Տիրոջ աշակերպների միջև հնարավոր միակ մրցակցությունը ճշգելն է, թե ով կարող է մեծագույն սերը մարուցել: Դիշենք ձեր մեծ եպիսկոպոս Ներսես Լամբրոնացու խոսքերը. «Աստծո հետ խաղաղության մեջ լինելու ուրիշ կերպ չկա, ոչ մեկի համար, եթե նախապես խաղաղությունը չի հասպարտվել մարդկանց հետ... Եթե սիրում ենք, և սա՛ է մեր չափանիշը, սերը լինելու է մեր բաժինը եթե մեր չափանիշը ոյսն ու արելությունն են, մեզ սպասում են ոյսն ու արելությունը»:

Այսօր Դայապանն իր բոլոր որդիներից ու քոյրերից ակնկալում է աշխոյժ ճիգեր և վերանորոգ զոհաբերություններ: Դայապանը կարիքն ունի, որ իր բոլոր որդիներն ամբողջ արվորդ աշխարհն հասարակաց բարիքի համար: Սա՛ միայն կապահովի, որ պարկեցր և վեհանձն ծառայությունը բոլոր նրանց, ովքեր գործում են հասարակաց կյանքում, վարձարպի ժողովորդի վարահությամբ և գնահատանքով. որ ընդամենքները լինեն միացած և հավատարիմ որ յուրաքանչյուր մարդկային կյանք սիրով ընկալվի հղության իսկ պահից և նաև հոգակարությամբ խնամվի, երբ գտնվել է հիվանդությունից կամ աղքաղությունից: Եվ ո՞յլ արդյոք կկարողանաք գրնել ուժը հասարակաց այս մեծ հանձնառության համար: Կգրնեք այն- դեռ, որ հայ ժողովուրդը միշտ էլ գտել է ներշնչումը՝ հարաբեկու համար իր բարձր գաղափարականների մեջ և պահպանելու համար մշակութային

և հոգեոր սեփական ժառանգությունը՝ լուսի և փրկության մեջ, որը ձեզ զայխ է Դիտու Քրիստոսից:

Հայաստանը Դիտու Քրիստոսի քաղցն ու ծարավն ունի, որի համար ձեր նախնիներից շատերը զոհեցին իրենց կյանքը: Այս դժվար ժամանակ-ներում մարդիկ հացի վիճությունի մեջ են: Բայց երբ այն ունենում են, նրանց սիրուն ավելին է կամենում կյամենապի կյանքի մի իմաստ, մի հույս, որ նեցով կանգնի իրենց ամենօրյա ծանր աշխատանքում: Ո՞վ նրանց կմղի դնելու իրենց հույսը Դիտու Քրիստոսի վրա: Դուք, Հայաստանը քրիստոնյաներ, դուք բոլորդ միասին:

Բոլոր քրիստոնյա հայերը միասին նայում են Դիտու Քրիստոսի խաչի՝ որպես աշխարհի միակ հույսին և որպես Հայաստանի ճշմարիտ լուսին ու փրկությանը: Բոլորդ ծնվել եք խաչի վրա Քրիստոսի խոցված կողից (հնմտ. Դովի Ժթ. 34): Խաչը ձեզ հոգեհարազար է որովհետք զիտեք, որ կյանք է և ոչ թե մահ, հաղթանակ է և ոչ պարտություն: Դուք սա զիտեք, որովհետք առվորել եք ճշմարդությունը, որը Ս. Պողոսը հոչակում է Փիլիպպացիներին. իր բանարարկությունը ծառայեց միմիայն Ավելարանի առավել ծավալնաւնը (Ա 12): Ի նկարի ունեցեք ձեր դառը փորձառությունը, որը նոյնական էղավ, իր ձևով, բանարարկության մի եղանակ: Ձեր ուսերին առաք ձեր խաչը (հնմտ. Մարտ. Ժթ. 24), և այն ձեզ չկործանեց: Ընդհակառակը՝ ձեզ վերսակենաց խորհրդավոր և հրաշալի կերպերով: Եվ հազար յոթ հարյուր տարի հետո կարող եք հասկապել՝ Միքան մարզարենի խութերով. «Մի՛ որևէ հարդի ինձ, ով իմ թշնամի: Ձեն գորովածի, նորից կյանգնեն, քանի որ եքու հավարում նարեն, Տերն է իմ լուսը» (Է 8): Հայաստանի քրիստոնյաներ, մեծ փորձությունից հետո՝ այժմ, ժամանակն է կրկին ոդքի կանգնելու: Հարություն առեք Նրա հետ, Ով բոլոր ժամանակներում եկել է ձեր լույսը և ձեր փրկությունը:

Էկուննիկ այս ուսուագնացության ընթացքում վառ կերպով փափառում էի այցելել այն վայրերը, որ կաթոլիկ հավատացյալներն ապրում են բազմանդամ համայնքներով: Փափառում էի աղոռեն 1988-թ ահավոր երկրաշարժի զոհերի գերեզմանների վրա՝ զիտակից, որ շատերը բակավին դատապում են նրա ողբերգական հետքանքների պատճառով: Փափառում էի անձամբ այցելել Տիրամայր Նարեկի հիվանդանոց, որին ես ինք երջանիկ եղանակապես պետք է երբ Հայաստանը դժվարության մեջ էր, և որի մասին զիտեմ, թե մեծապես զնահարդար է իր կողմէց մարդու առաջնային համար՝ շնորհիվ Կարմիրյանների և Դիտու փոքրիկ քոյրերի անխոնչ աշխարհի: Տրագուած այցելություններից ոչ մեկը, սակայն, հնարավոր չեղավ: Իմացեք, որ դուք բոլորդ տեղ ունեք իմ սրբում և իմ աղոթքներում:

Ճար սիրելի եղբայրներ ու քոյրեր երբ կտն վերադառնաք այս սրբավայրից, հիշեցնեք, որ Դուսի Եպիսկոպոսը եկել է մեծարելու հայ ժողովրդի հավատքը, որի մեկ մասնիկն եք՝ նրան հապուկ կերպով սիրելի: Նա եկել է հոչակելու ձեր հավատարմությունը և ձեր քաջությունը և զովարանելու

Ասդուն, որը պարզեց ձեզ լրեսնել ազարության օրը: Այսին՝ այս շքեղ խորանի մոտ, հիշենք բոլոր նրանց, ովքեր պայքարեցին այս օրը լրեսնելու համար և չլրեսան այն, բայց որ այժմ այն հիացմունքով դիրում են Աստծո Արքայության համարենական փառքից:

Ձեր կողմից քննչորեն սիրված Ս. Կոյս Աստվածածինը թող հսկի իր հայ որդիների վրա և բոլորին՝ փոքրերին, երիտասարդներին, ընդունակներին, դարեցներին, հիշանդներին, ընդմիշտ պահպանի իր ինևամակալ պատմուճանի ներքո: Նայասրանն ընդմիշտ համարարդին (*Armenia semper fidelis!*): Ասդո՞յ խաղաղությունը թող միշտ ձեզ հենք լինի: Ամեն:

Օրվա երկրորդ կեսին Դովիաննես-Պողոս Երկրորդ Պապը, ընկերակցությամբ Վեհափառ Նայրապետի, եյուրընկալվեց Քանաքետի կաթողիկես Եկեղեցում, իսկ այնքետից վերադարձավ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, որ վերի ունեցավ «Ողջերթ»-ի արարողություն և սպորագրվեց համագեղ հայրարքություն (գիտե՞ք 29):

Ժամը 17.45-ին երկու Դովվապետերը ուղևորվեցին Դայոց քրիստոնեական հավաքքի ծննդավայր Խոր Վիրապ, որ վերի ունեցավ ջահի փոխանցման կարգը: Երկու Դայրապետերը «Ուրախ լեր» շարականի հնչյունների ներքո մուկը գործեցին Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցի: Այսուհետև Վեհափառ Նայրապետը «Ով երջանիկ» շարականի հնչյունների ներքո հջավ Վիրապ, որպեսից դրւու բերեց վառված ջահի և այն փոխանցեց Սրբազն Պապին: Սրբազն լույսը, որ խորհրդանշում է հայոց հավաքքի լույսը, որով Սուրբ Գրիգոր Լուսավորիչը Ս. Վենդիկարանի լույսով լուսավորեց Դայասրան աշխարհը, այսուհետև կվարվի Վարդիկան և կշարունակի անմար վառվել այնքեղ՝ ի նշանավորումն երկու Եկեղեցիների բարեկամության և որպես առհավաքչյա քոյր Եկեղեցիների փոխըմբռնման և համագործակցության, բարեխոսությամբ մեր հավաքո Հոր՝ Գրիգոր Լուսավորիչը: Վանքի բակում Սրբազն Պապը և Վեհափառ Նայրապետը ներկաներին առաջնորդեցին կարդալու 1700-ամյակի մասնավոր հիշաբակության աղոթքը.

«Քրիստոն Աստված մեր, Փրկիչ և լոյս աշխարհի, որ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ քարոզության միջոցով 1700 տարի առաջ քո կենացար լոյսով լուսավորեցիր հայ ժողովութին, Զո բարերար, սրբարար և բժշկարար լոյսով լուսավորիր նաև ինձ, իմ ընդունակին և հարազարերին: Տուր մեզ հսկադր և ուժ, որպեսզի մեր անձերը այսօդ, առավել քան երբեք, քեզ ընծայենք, և դարձրու մեզ քո ընկրոյալ անոթին՝ մեր Սուրբ Եկեղեցու արժանի ծառաներին: Ներիր մեր հանցանքները և օգնիր մեզ, որպեսզի քո սիրույդ արժանի քրիստոնեական վարքով ապրենք: Օրինիր Կաթողիկես Եկեղեցին և Նայասրանայց Առաքելական Եկեղեցին՝ իր Դովվապետերով, առաջնորդներով ու հավատացյալներով. նրա միջոցով թող շողա քո փրկության լոյսը, բարեխոսությամբ Սուրբ Աստվածածին և Ս. Գրիգոր Լուսավորիչ: Փա՛ռք քեզ, Տեր, այժմ և միշտ և համարյան ամեն»:

Աղոթքից հետո երկու Դայրապետերը իրենց օրինությունը դվեցին ներկա հավաքացյալ ժողովութին և ժամը 18.00-ին ուղևորվեցին «Զվարթնոց» օդանակակայան:

Օդանավակայանում գոյց Եկեղեցապետքերին դիմավորեցին ՀՀ Նախագահը և ողջ պետքական ավագանին, հոգևոր և աշխարհիկ բարձրասպիծան ներկայացուցիչներ, հյուրեր: Երկու Հովկապետքերը առաջնորդվեցին դեպի նախապես պարբռաստված հարուկ բնմահարթակ: Դեպական ընդունված արարողակարգով հնչեցին Հայաստանի Հանրապետության և Վարդիկանի օրիներգերը, որից հետո մոփեցավ պարվուածականին երամանապարարը համապարասխան զեկույցով: Սրբազն Քահանայապետին ողջերի և ցիետության խոսք ուղղեց ՀՀ Նախագահը.

ՀՀ ՆԱԽԱԳԱՅՆ ՌԱԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱԿԻ ՈՂՋԵՐԹԻ ԽՈՍՔԸ

Զերդ Սրբություն,

Վահագիան Տեր,

Սրբազն հայրեր,

Տարգարժան հյուրեր,

Հովհաննես-Պողոս Երկրորդ Սրբազն Քահանայապետի այցը Հայաստան մողենում է իր ավարտին: Բայց արդեն կարող ենք արձանագրել, որ այցը ունենալու է պատմական նշանակություն: Այն իր մեծ ու դրական ազդեցությունն է գործելու Հայաստանի և Վարդիկանի հարաբերությունների հետագա զարգացման ու խորացման ողջ ընթացքի վրա: Ձենք կասկածում, որ այս այցը նոր ու զորեղ ազդակ կինք նաև Վարդիկանի և Հայ Առաքելական Եկեղեցու գործակցության սերտացման համար:

Զերդ Սրբություն,

Մենք մեր երախտագիրությունն ենք հայրենում Զեզ՝ Հայաստանում քրիստոնեության 1700-ամյակի և Հայաստանի անկախության 10-րդ դարերի դարձի լուսակարարությունները Զեր Անրիկայությամբ պարզելու համար: Մենք զգացված ենք մեր երկրի ու նրա ժողովրդի նկատմամբ ցուցաբերած Զեր ջերմ զգացմունքներից: Կարող եք վստահ լինել, որ այդ զգացմունքները պահպան են:

Հայ ժողովուրդն իր պատմության ընթացքում լրեսել է վերելքներ և կորուստներ, տեսել է նաև ամենասարսափելին: Զեր կարարած քայլերը վկայություններ են, որ մենք մենակ չենք պատմական արդարության վերականգնման մեր շանքերում: Այս իրդությունը մեր սրբերը լցնում է երախտագիրությամբ: Ի դեմք Վարդիկանի և Սուրբ Աթոռի սպասավորների, մենք գրենանում ենք խաղաղության, արդարության ու մարդասիրության շարտագովների:

Զերդ Սրբություն,

Հայաստանի 10-ամյա անկախությունը մեր ժողովրդի համար եղավ հզոր ազդակ՝ իր հոգևոր ակունքներին վերադառնալու: Այսօր Հայաստանի առջև ծառացած խնդիրների լուծման և առկա դժվարությունների հաղթահարման գործում մենք մեծապես կարևորում ենք հասարակության բարուական և հոգևոր առողջությունը: Մեզանում խորը արմագներ ունեցող

քրիստոնեական ավանդույթն իր ազդեցությունն է գործում մեր նոր քաղաքականության վրա: Դրա հիմքում անհարի և ժողովրդի ազատությունն է՝ ինքնարդահայրածան լավագույն նախապայմանը:

Աշխարհում այս վեհ արժեքների արևարավորման գործում առանձնահարուկ է Ձեր դերակարգարությունը, որը մենք շատ բարձր ենք գնահատում:

Տայապահ Տանրապետությունն ու նրա ժողովուրդը մղադիր են, ազգերի միջազգային ընդամենքի հետ միասին, իրենց համեստ լուսան բերել աշխարհում խաղաղության ու բարգավաճման գործին:

Այս պայծառ հավագույն է, որ մենք մաղթում ենք Ձեզ բարի ճանապարհ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՇԱՅՈՅ ԿԱՌ-ՌԱՄԱՆԻ ՈՂՋԵՐՁԻ ԽՈՍՔԸ

Սիրեցյալ եղբայր ի Քրիստու:

Դրամեջիր ապրունով ենք համակված բոլոր այս պահին: Ամեն հրաժեշտ, սակայն, կրում է նաև նոր հանդիպման հույսն ու ուրախությունը:

Երեք հիշարժան օրեր ապրեցինք Ձերդ Սրբության և Կաթոլիկ մեր եղբայրների ու բույրերի հետ: Տագեցած օրեր՝ առանձնահապուկ քրիստոնեական մեր Եկեղեցիների սիրո և եղբայրության արդահայրությամբ, որ լավագությունն են ավելացնում մեր հոգիներում և մեր կյանքում:

Ձերդ Սրբությունը տեսավ Արարտադր և ապրեց այն հոգմունքը, որ հայեր զգում ենք ամեն առավոր՝ սուրբ լեռանը հայացք ուղղելիս: Տանզ ված ենք, որ Դուք կարճապէ այս ժամանակում զգացիք ու ճանաչնեցիք Տայապահ հոգին՝ Քրիստոսասեր հոգին: Սիրելի հուշեր եք դանում Ձեզ հետ հինավորց մեր երկրից:

Ձեր այցը Տայապահ՝ Տայ Եկեղեցու համար հոբելյանական տարում, հավելեց ուրախությունը հայության, գովեանդեց մեր ժողովուրդին քրիստոնեական Եկեղեցիների միության նոր վկայությամբ: Վիրավի, հոբելյանական տարվա մեջ բացառիկ եղան և աննոռաց կմնան սեպտեմբերյան տրնական այս օրերը, քանզի մեր ուրախությունը մեզ հետ կիսեցին, մեզ իրնդակից եղան Քրիստոսին հավատացող ազգեր և պետություններ:

Մեր ժողովուրդի հետ Սևեր հավատում ենք, որ Տայ և Շոտիեական Կաթոլիկ մեր երկու Եկեղեցիների եղբայրությունը միշտ նորոգվելու է սիրով, որի համար միասնաբար խնդրեցինք Բարձրայի օրինությունը: Տիրոջ առջև մենք միասնաբար հայցեցինք նաև բարեկուսությունը Տայապահում քրիստոնեությունը պետական կրոն հոգակած երկու սրբերի՝ Ս. Գրիգորի և Ս. Տրդալիք՝ հանուն աշխարհում խաղաղության ու բոլոր սրբերում բարի կամուցողության հասրափառման ու զորացման:

Սիրեցյալ եղբայր ի Քրիստու.

Դուք Ձեզ հետ Հռոմ եք լրացնում Խոր Վիրապում վառված լուսը՝ խոր հղողանիշը Սուրբ Լուսավորչի Կանթեղի, որով դարերի մեջ միշտ անսար ու լուսավոր մնաց հայոց հավաքը: Թող մշտավառ այդ լուսը, որը 2001 թվականին առավել պայծառ է հայոց հոգիներում, լուսավորի Տայ և Հռոմ մեական Կաթոլիկ Եկեղեցիների եղբայրության ճանապարհը:

Ձերդ Սրբություն

Բարի ճանապարհ ենք մաղթում Ձեզ և Աստծո օրինությամբ լեցուն եղանիկ կյանքի Մեր լավագույն մաղթանքներն ու սիրո ողջունը հղում կառույկ քույրերին ու եղբայրներին՝ ի Հռոմ և ի ավոտու աշխարհի:

Թող Ամենաահնամ ու Բարերար Աստված ընդունի մեր միասիրո աղոթքը, մեր խնամքին հանձնված բանավոր հոգին պարզվի ամենայն շնորի ու բարիք և պահպանի Բարեգութ Իր հայացքի ներքո Իր Սուրբ Եկեղեցին և աշխարհը համայն: Անն:

Ապա հրաժեշտի շնորհակալական իր խոսքն ասաց Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապը.

ՄՐԲԱՋՄՆ ՔՄՇԱՆԱՅԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ


Մեծարդու Նախագահ Պրև Քոչարյան, Ձերդ Սրբություն, շատր սիրելի հայ բարեկամներ,

Տասել է ժամանակը հրաժեշտի լրացու և շնորհակալություն հայունելու Ձեզ, պարուն Նախագահ և կատավարության անդամներ, Տայաստրանու գլուխ հոյակապ հուրդներության համար: Երախտապարտ եմ բոլորին, քաղաքացիական և զինվորական իշխանություններին և գործակիցներին, լուսավորական և արանց և կանանց, նրանց, ովքեր իրենց ժամանակը և կարություններն գործադրեցին՝ հաջողությամբ պատկերու այս այցը:

Խոր հոգունով իմ երախտագիրությունն եմ հայունում Ձեզ, Ձերդ Սրբություն Ծայրագոյն Պատրիարք և Կաթողիկոս, Տայաստրակայց Առաքելական Եկեղեցու Ավիտապետությանն ու հավաքացյաններին՝ այս օրերի ընթացքում մեր կիսած եղբայրական սիրո և հաղորդության հոգու համար:

Սիրով ողջունում եմ ձեզ, շատր սիրելի Ներսես արքապիտուղուստու, Վարդան արքեպիսկոպոս, Փագուրու եպիսկոպոս, և ձեզ՝ Կաթոլիկ Եկեղեցու քահանաներ, կրոնավորներ, կրոնավորուիններ և աշխարհական հավատացյալներ. մեծ ուրախությամբ, միասնաբար ծիսակալությունը մեր հավաքքի խորհուրդը, և անձնական փորձով նկատեցի ձեր հայրենակիցների հետ միատեղ գործելու ձեր փափազը՝ առավելագույն արդարության և հայ քաղաքացիների լավագույն կյանքի համար: Պատը ձեզ կրում է իր սրբուն, և Աստված ինքը կրու ձեզ ուժ՝ դիմակայելու ձեր առջև կանգնած մարտրավերներին:

ՈԿՍԵՆԴԱՎԻ ԱԼՓ ՎՃՇՎԱՍՑՈՒԳԹՎԱՆ ՆՎՋՁՋԱՌՑՆ ՁԻՎ ՎՍԽՎ



Փափագում եմ մեկ անգամ ևս հայրնել իմ գնահատանքը հանդեպ բողոք Եկեղեցիների և եկեղեցական համայնքների ներկայացուցիչներին, որոնք մասնակցեցին իմ այս այցի հետ կապված իրադարձություններին: Ձռողի Քրիստոսի բողոք հետևողաբար աճեն Եկումենիկ վարչահության և բարեկամության մեջ, մինչ թե ակրութում ենք երրորդ հազարամյակ և ընթանում միշտ առավել սերդ միխության և գործակցության ճանապարհով:

Ընորհակալություն քեզ, Տայասպանի ժողովուրդ, բարեկամության ջերմության համար, աղոթքի համար, որ կարարեցինք միասին՝ քրիստոնյաների միխության վառ փափագիդ համար: Ընորհակալություն հավրկապես հավատիդ վկայության համար, հավատ, որը երբեք չըքննիր մոռալ ժամանակներում, հավատ, որը խորապես արմադավորված է մնում քո ընդունիքներում և քո ազգային կյանքում:

Պատմության ընթացքում Արարար լնոն անսասանության մի խորհրդանիշ և վարպահության աղբյուր է եղել հայ ժողովուրդի համար: Բազմից անգամներ այդ անսասանությունը և վարպահությունը դաժանորեն փորձության ենթարկեցին բռնությունը և հայածանքները: Հայ ժողովուրդը թանկ գնով վճարեց իր սահմանային դիրք ունենալու համար, այնպես որ «սրբություն» և «մարտիրոսություն» եզրերը գրեթե հոմանիշ դարձան ձեր բարսպաշտություն: Անցյալ դարասկզբի զարդուրենի իրադարձությունները, որոնք ձեր ժողովուրդին հասցրին «քնաջևաջնան սեմին», ամբողջապիրական հայութահարության երկար դարիները, աղեղալի երկրաշարժի ավերածությունները ի վիճակի չնոյան հայ ոգուն խոշոլուրենու վերագրնել քաջությունը և վերսպանակ իր մեծ արժանապարփությունը:

Ճիշտ է, սրանք ոժվարին դարիներ են, և ձեր սիրով երբեմն հոգնած է և վրդովված: Ձեր երիտասարդներից շատերը թողել են երկիրը, որ ծնվել են, բավականաշատ աշխարհանք չկա, և աղքատությունը շարունակվում է, ոժվար է հարաբերել աշխարհելու հասարակաց բարիքի համար, բայց, շատ սիրելի հայ բարեկամներ, անդրդվելի մնացեք հույսի մեջ: Դիմեցնեք, որ ձեր հույսը դրել եք Քրիստոսի վրա և ձեր «այո»-ն եք ասել Նրան առհավելք:

Ամբողջ աշխարհի ձեր եղբայրներին և քույրերին որպես նեցուկ ունենալով՝ համանառություն եք սպանձել ձեր երկիրը և ձեր հասարակությունն առարկության մեջ վերակերպելու գործում:

Ժամանակը հասունացել է, որպեսզի ձեր ազգն իր մշակութային ներուժը և իր հոգնոր ուժները վերանիմավորի ծրագրավորված մի մեծ շանքի մեջ՝ զարկ դարւու համար իր զարգացմանը և բարգավաճելու համար իր քրիստոնեական ժառանգության առանցքային ճշմարտությունների հիմքի վրա: Խարդարային յուրաքանչյուր եակի արժանապարփությունը, անձի կենուրունականությունը որևէ հարաբերությունում և վիճակում, բոլորի համար հավասար արդարության և գլուխութիւն ու նվազ բախտավորներին զորավիճակ կանգնող համերաշխության բարոյական հրամայականը: Տիրոջից իրնորում եւ նաև, որ Տայասպանի դարածաշրջանի մյուս ժողովուրդների դե-

կավարներն ունենան խաղաղության արահետներում քաջությանք առաջադիմությունը ու հարաբենությունը, քանի որ առանց խաղաղության չի կարող լինել հավասարի զարգացում և բարգավաճում:

Մինչ հրաժեշտ եմ գումար ձեզ՝ թի եմ վարահությանք, քանի որ տեսա վերաշխուժացման ձեր կարողությունը և ձեր բաղձանքների ազնվականությունը: Թող միշտ հնչի հայերի սրբում ձեր մեծ բանապետղ Շովիաննես Թունանյանի խոսքը հայրենիքի մասին:

Բայց իին ու նոր վերքերով կանգնած ես դու կենդանի,

Կանգնած խոհոն՝ խորհրդավոր ճամփին իին ու նորի.

Դառաշանքով սրբի խորքից խոսք ես խոսում Ասրծու հետ ...

Ու պիտի զա հանուր կյանքի արշալույսը վառ հազած
Հազար-հազար լուսապայծառ հոգիներով ճառազած,
Ու երկնահաս քո բարձունքին, Արարարի սուրբ լանջին,
Կենսածպիր իր շողերը պիտի ժայռան առաջին,
Ու պուտներ, որ չեն պղծել իրենց շուրջերն անեծքով,
Դիրի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչը և հայ մարտիրոսների և սրբերի մեծ բազմությունը թող հակեն ձեր ներկայի և ձեր ապագայի վրա: Զրիսպոսի Մայրը՝ Նոր Ուսպի Տապանակը թող առաջնորդի Հայաստանին դեպի խաղաղություն, որ Զրինեղեղից այն կողմ է խաղաղությունն Ասրծո, որն Իր ծիածանը կապեց ամպերի մեջ՝ որպես Իր անվերջ սիրո նշան (հմմ. Ծննդ. Ձ 13):

Ճնորհակալությունն, պարոն նախազահ: Ճնորհակալությունն, շատ սիրելի եղբայր Գարեգին: Ճնորհակալությունն ձեզ՝ բոլորիդ:

Նոոմի Սրբազն Քահանայապերը մեկնեց Հայաստանից՝ իր հետ գանելով մեր հարգանքն ու սերը իր նկարմամբ և մեր դարավոր ազգային-հոգևոր ինքնությանը միաշաղախված նվիրումն ու հավաքը համաքրիստոնեական եղբայրությանը և փոխըմբռնմանը:

ԱՐԹՈՒՐ ՄՐԿ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ